

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ԳԻՐԱԹԱՂԻ ՄԱՐՄԱՐԱՐԱՑՎԱԾ ԿՐԱՔԱՐԵՐԻ ՀԱՆՔԵՐԵՎԱԿՄԱՆ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՏԵՂԱՄԱՍԵՐՈՒՄ 2025-2027թ. թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԵՆ՝

Գ. ՓԱՐՍՅԱՆ



ԿԱՊԱՆ- 2025թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
2 ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՌՈՏ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	7
2.1. Հանքերևակման տեղամասերի երկրաբանական կառուցվածքը	8
3 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ	10
3.1. Երկրաբանահանույթային աշխատանքներ	12
3.2. Հորատանցքերի հորատում	12
3.3. Փորձնական բացահանքերի անցում	12
3.4. Լեռնային փորվածքների փաստագրում	13
3.5. Նմուշարկում	14
3.6. <u>Լաբորատոր ուսումնասիրություններ</u>	14
3.7. Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ	15
3.8. Ռադիոմետրական ուսումնասիրություններ	16
3.9. <u>Հորատման հրապարակների և ճանապարհների կառուցում</u>	16
3.10. <u>Բեռների և ուղեվորների փոխադրում</u>	17
3.11. Խախտված տարածքների ռեկուլտիվացիա	17
3.11. Փոխհատուցում հողօգտագործման համար	20
3.12. Ջրամատակարարում և ջրհեռացում	20
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ	21
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	22
4 ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ	23
5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	29
6 ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	67
7 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	78
8 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	82
9 ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	84
Բնապահպանական կառավարման պլան	88
Օգտագործված գրականություն	91
ՀԵՑ, ԲԵՑ եղեկանքներ, ՋՕ թույլտվություններ, կադաստրային տվյալներ	92-108

## ՕԳՏԱԿՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

- Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են
- Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.
- Օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն
- Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում
- Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ
- Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում
- Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին:
- Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական
- Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր:

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## -Նախաձեռնող կազմակերպություն

Կապանի «Նորոզի» ՍՊ ընկերություն,  
ՀՀ. ք. Կապան, Մ. Հարությունյան 1ա/5  
Գրանցման համար 27. 110. 01555  
Գրանցման ամսաթիվ 2008-10-02  
ՀՎՀՀ 09400653

## - Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ներքին Գիրաթադի մարմարացված կրաքարերի հանքերնակման 1-ին և 2-րդ տեղամասերում 2025-2027թ.թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության (աշխատանքների ծրագիրը կազմված է ըստ Կապանի «Նորոզի» ՍՊ ընկերության երկրաբանական առաջադրանքի:

Հանրապետությունում տնտեսական զարգացմանը զուգնթաց ավելացել են նաև շինարարական աշխատանքների ծավալները (շենքերի կառուցապատում, ճանապարհաշինություն և այլն) մարզում, որը հետագոտվող տարածաշրջանի շուկայում առաջացրել է շինանյութերի մեծ պահանջարկ, որն էլ նպաստել է ընկերությանը ձեռնամուխ լինել նոր հանքավայրերի շահագործմանը, ինչպես նաև հեռանկարային տեղամասերում պաշարների հաշվարկմամբ երկրաբանահետախուզական աշխատանքների կատարմանը՝ դրական արդյունքների դեպքում հետագայում շահագործման նպատակով:

Այդ նպատակի համար Կապանի «Նորոզի» ՍՊ ընկերությունը նախատեսում է ՀՀ Սյունիքի մարզի Գիրաթադի մարմարացված կրաքարերի հանքերնակման տեղամասում իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ օգտակար հանածոյի որակաքանակական հատկությունները պարզաբանելու համար, հետագայում շահագործելու նպատակով:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 20մ խորությամբ սյունակային հորատման, փորձնական բացահանքի անցմամբ, մերկացումների փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով, ինչպես նաև կատարել մարմարացված կրաքարերի միներալային և քիմիական կազմերի, ֆիզիկամեխանիկական ցուցանիշների լաբորատոր ուսումնասիրություններ, պետրոգրաֆիական նկարագրություն ու ուսումնասիրել տեղամասի մարմարացված կրաքարերի ճառագայթահիգիենիկ հատկությունները:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պետք է համապատասխանեն ԳՈՍՏ 9479-2014 «Քարաբլոկներ բնական քարից՝ երեսապատման իրերի արտադրության համար» տեխնիկական պահանջներին, իսկ թափոնները «Խիճ և ավազ գեղազարդային բնական քարից: Տեխնիկական պայմաններ» 22856 ԳՈՍՏ-ի տեխնիկական պահանջների:

Աշխատանքների շրջանը գտնվում է Կապանի կառուցվածքա-մետաղածնական գոտու արևելյան մասում և բնութագրվում է բավականին բարդ երկրաբանական կառուցվածքով, տարբեր հասակի ապարների մեծ տարատեսակներով:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի 06-Ն հրամանի հավելված 2-ի հրահանգի աղյուսակ 1-ի հայցվող տեղամասը վերագրվում են 1բ խմբին հորիզոնական կամ սակավաթեք տեղադրմամբ շերտաձև մարմիններ՝ տեկտոնական գործընթացներով չխախտված կամ թույլ խախտված:

Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն երկրաբանահանույթային երթուղիների, հորատանցքերի հորատման, փորձնական բացահանքերի անցման և համապատասխան նմուշարկման աշխատանքների համալիրով:

Օգտակար հանածոյի որակական հատկությունների (ֆիզիկատեխնիկական ցուցանիշների) ուսումնասիրությունները կիրականացվեն մասնագիտացված լաբորատորիայում: Կատարվեն նաև օգտակար հանածոյի քիմիական և միներալոգիական ուսումնասիրություններ:

Ներքին Գիրաթաղի մարմարացված կրաքարերի հանքերնական 1-ին և 2-րդ տեղամասերը վարչական առումով գնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Քաջարան համայնքում, Վերին Գիրաթաղ գյուղից 1,4կմ դեպի հարավ, Ներքին Գիրաթաղ գյուղից 1,0կմ դեպի հյուսիս-հյուսիս-արևմուտք, Գիրաթաղ գետի միջին հոսանքի ավազանում և զբաղեցնում են մոտ 9.83հա տարածք /1-ին տեղամաս 3.23հա, 2-րդ տեղամաս 6.60հա/ 1400-1602.5մ բացարձակ բարձրությունների /1-ին տեղամաս 1400-1501.5, 2-րդ տեղամաս 1505.0-1602.2մ/ վրա: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են /Ըստ Գրինվիչի/.

1-ին տեղամաս

2-րդ տեղամաս

Հյուսիսային լայնություն – 39° 13' 37.01 ''

Հյուսիսային լայնություն – 39° 13' 43.85''

Արևելյան երկայնություն – 46° 15' 56.06''

Արևելյան երկայնություն – 46° 16' 04.71''

Տեղամասերը ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով կապված են Ներքին և Վերին Գիրաթաղ, Դավիթբեկ գյուղերի և Կապան քաղաքի հետ:

Հետախուզվող տեղամասերի մակերևույթը ներկայացված է քարքարուտներով և գյուղատնտեսական նպատակների համար պիտանի չէ:


Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար ընկերության կողմից հայցվող տարածքը սահմանափակվում է ստորև նշված ծայրակետային կոորդինատներով (ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով).

1-ին տեղամաս		2-րդ տեղամաս	
1.	4344424.52 8609236.21	1. Y =8609521.63	X =4344540.95
2.	4344495.15 8609203.14	2. Y =8609393.01	X =4344702.87
3.	4344733.61 8609281.08	3. Y =8609317.73	X =4344827.35
4.	4344635.75 8609341.95	4. Y =8609485.45	X =4344946.58
5.	4344531.07 8609421.87	5. Y =8609642.75	X =4344726.38

ՆԵՐՔԻՆ ԳԻՐԱԹԱՂԻ ՄԱՐՄԱՐԱՑՎԱԾ ԿՐԱՔԱՐԵՐԻ ՀԱՆՔԵՐԵՎԱԿՄԱՆ  
ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Մասշտաբ 1:25 000

Ցանցը ARM WGS 84 համակարգով



Ներքին Գիրաթաղի մարմարացված կրաքարերի հանքերևակում



1-ին տեղամաս



2-րդ տեղամաս



Գիրաթաղի պորֆիրիտների հանքավայր

Սկար 1.

## 2. ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՌՈՏ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքների շրջանը գտնվում է Կապանի կառուցվածքա-մետաղաձևական գոտու արևելյան մասում և բնութագրվում է բավականին բարդ երկրաբանական կառուցվածքով, տարբեր հասակի ապարների մեծ տարատեսակներով:

Տեղամասի շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին դևոնի, յուրայի հրաբխածին – նստվածքային, ստորին կավճի նստվածքային (մասնակիորեն մետամորֆիզացված), ստորին չորրորդական հրաբխածին և ժամանակակից առաջացումներով (Նկ. 3): Ստրատիգրաֆիական կտրվածքը ըստ Վ. Տ. Հակոբյանի ներքնից – վերն ներկայացված է հետևյալ կերպ:

- **Դևոնի համակարգի ստորին-միջին բաժանի:** Հանդիսանում են շրջանի ամենահին ապարները, ներկայացված են դիաբազային պորֆիրիտներով կրաքարերի նրբաշերտերի և ոսպնյակների հաստաշերտով, կրաքարերով, մարմարներով և մարմարացված կրաքարերով: Լայն տարածում ունեն հետախուզվող շրջանի արևմտյան մասում:

- **Ստորին յուրա (ստորին – միջին բաժանի):** Ստորին հրաբխածին շերտախումբ: Հաստվածքը ներկայացված է բրեկչիանման էպիդոտիզացված պորֆիրիտներով, որոնք հերթափոխվում են տուֆերի, տուֆոբրեկչիաների և տուֆաավազաքարերի ենթաշերտով: Հանդիսանում են շրջանի առավել հին ապարները՝ տեղադրված են Կապանի բրախիանտիկլինալի առանցքային մասում, ունեն բավական սահմանափակ տարածում: Դրանց ընդհանուր հզորությունը 1000 մ է:

- **Միջին յուրա (միջին – վերին բաժանի) –** այս ապարները աններդաշնակորեն ծածկում են ստորին յուրայի ապարներին, ունեն սահմանափակ տարածում և նշվում են անտիկլինալի առանցքային մասում: Ներկայացված են քվարցային պորֆիրիտների հոսքերով և ծածկոցով, դրանց տուֆերով և տուֆաբրեկչիաներով, ինչպես նաև սահմանափակ տարածում ունեցող տուֆաավազաքարերի, ավազաքարերի դարսաշերտերով (Բարաբատումի շերտապումբ):

- **Միջին-վերին** - բաժանի կտրվածքը ավարտվում է տուֆաավազաքարերի ու ավազաքարերի դարսաշերտի ներփակող պլազիոկլազային, մանդելշտեյնային և քվարց-պլազիոկլազային պորֆիրիտների հաստվածքով:

- **Վերին յուրա (լուզիտան-կիմերիջ)** – ծածկում են միջին յուրայի ապարներին բացահայտ անկյունային և ազիմուտալ աններդաշնակությամբ և նկարագրվող շրջանում ունեն գերիշխող տարածում:

Վերին յուրայի առաջացումների հիմքում տեղադրված է տուֆակոնգլո-մերատների հզոր հաստվածքը, որոնց մեջ առանձին տեղամասերում նկատվում են կրաքարերի և կրային ավազաքարերի ենթաշերտեր: Տուֆակոնգլոմերատների վրա տեղադրված են տուֆոբրեկչիաների շերտախումբը և պորֆիրիտների հոսքերը: Հաստվածքում նկատվում է նաև կրաքարերի և կրաավազաքարերի ոսպնյակներ և ենթաշերտեր: Ընդհանուր հզորությունը ավելի քան 1000մ է:

- **Տիտոնտորին վալանժին Խուստուպ-Չիմանի հրաբխային հաստվածք:** Ներկայացված է հրաբխածին ֆացիայով՝ պորֆիրիտներ և նրանց պիրոկլաստներ, որոնք ներկայացված քարտեզի սահմաններից դուրս ներդաշնակ ծածկվում են ստորին կավճի Ագարակի ենթաշերտախմբի նորմալ ծովային նստվածքային ապարներով՝ կրաքարերով: Հաստվածքի հզորությունը 280-300 մ է:

- **Չորրորդականի առաջացումները** տարածված են շրջանի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մասում՝ Արծվանիկ գյուղի շրջանում ու խալաջ գետի ավազանում և ներկայացված են Ստորին չորրորդականի անդեզիտաբազալտների հոսքերով, որոնց հզորությունը հասնում է 90-100 մ-ի:

- **Ժամանակակից նստվածքները** ներկայացված են դելյուվիալ, ալյուվիալ-պրոլյուվիալ խճազլաքարային, ավազազլաքարային, ավազակավային առաջացումներով: Դելյուվիալ առաջացումները զարգացած են լեռնալանջերում և ունեն ոչ մեծ հզորություն, իսկ ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները՝ Ողջի գետի ավազանում: Վերջիններս ներկայացնում են Ավազակոպճաքարային ապարների ժամանակակից հունային առաջացումներ, որոնց հետ է կապված հետախուզված հանքավայրի օգտակար հաստվածքը:

**Տեկտոնական տեսակետից** շրջանն ըստ Ա.Տ.Ասլանյանի, իրենից ներկայացնում է մոնոկլինորիում, որի առանցքն անցնում է Կապան քաղաքի վրայով հյուսիս-արևմտյան ուղղությամբ (310-320, անկման անկյունը 35-45°), որի թևերը բարդեցված են երկրորդական ծալքավորությամբ: Դրա հյուսիս-արևմտյան թևում հստակ առանձնանում է Ագարակ-Կարմրավանքի անտիկլինալը, որի առանցքը ևս ունի հյուսիս-արևմտյան (325-335°) տարածում:

Երկրորդական ծալքերը կազմված են վերին յուրայի և կավճի ապարներով և առանձին դեպքերում բարդեցված են միջօրեական և լայնական ուղղությամբ ձգվող խզումներով:

## 2.1. Տեղամասի երկրաբանական կառուցվածքը

Հետախուզվող տեղամասերը գտնվում են Ներքին և Վերին Գիրաթաղ գյուղերը միացնող գրունտային ավտոճանապարհի աջ և ձախ կողմերում:

Հետախուզվող տեղամասերը ծագումնաբանորեն հարում են Կապանի կրաքարային նստվածքային (մասամբ մետամորֆիզացված) հաստվածքին: Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում է տիտան-ստորին վոլոնժինի հրաբխաբստվածքային ապարների շերտախումբը և ժամանակակից առաջացումները. Տիտան-ստորին վոլոնժինի հրաբխաբստվածքային ապարների շերտախումբը ներկայացված է պորֆիրիտներով, տուֆափշրաքարերով, կրաքարերով, մարմարացված կրաքարերով: Շերտախումբը մերկանում է Ներքին Գիրաթաղ գյուղի սահմաններում:

Ըստ նախնական տվյալների, համաձայն տեղամասում առկա մերկացումների տեղամասի նախկինում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների



արդյունքների տեղամասի լիթոլոգիական կտրվածքը ներկայացված է հետևյալ կերպ (ներքևից վերև)՝

1. տիտոն-ստորին վալանժինի հասակի հոծ մարմարացված կրաքարեր

2. տիտոն-ստորին վալանժինի հողմահարված, ճեղքավորված մարմարացված կրաքարեր

3. Ժամանակակից առաջացումներ

Ըստ տարածման մարմարացված կրաքարերի ելքերը լայն գոտիով հետապնդվում են տեղամասի սահմաններում ու տարածվում են տեղամասի հարակից տարածքներում:

Տեղամասում մարմարացված կրաքարերն ըստ ֆոնդային նյութերի տվյալների ունեն մեծ հզորություն և տարածված են հետախուզվող շրջանի հարավ-արևմտյան մասում:

Դաշտային նախնական դիտարկումների համաձայն, ըստ մերկացումների տվյալների մարմարացված կրաքարերը արտաքինից հաստ-շերտավոր, հոծ, խիտ, վերին մասերը ճեղքավորված, հիմնականում դեղնա-վարդագույն գունավորմամբ համասեռ և միատարր ապարներ են:

Մերկացումներում դիտվում է, որ մարմարացված կրաքարերի միաձուլությունը մասամբ խախտված է հիմնականում շերտավորման և տեկտոնական ճեղքերով: Մեծամասամբ ճեղքերը դատարկ են, առանձին դեպքերում լցված էզոգեն կարբոնատային բեկորային նյութով, որի հիմնական մասը օրգանածին նյութն է: Առանձին հատվածներում տեսանելի են բրածոների խեցիները (0.25-0.35մ-ից մինչև 1.5-2.5մ):

Օգտակար հաստվածքի վերին մասում առկա է 1.65մ-ից մինչև 2.5մ հզորությամբ երեսաշերտ, ներկայացված ուժեղ ճեղքավորված, հողմահարված, մասամբ փոփոխված մարմարացված կրաքարերով:

Ժամանակակից առաջացումները տարածված են հիմնականում հարթ լեռնալանջային մասերում և ներկայացված են դելյուվիալ առաջացումներով: Տեղամասի տարածքում մարմարացված կրաքարերը ոչ համատարած ծածկվում են 0,25-0,35մ (միջինը տեղամասերում 0.3մ) հզորության դելյուվիալ կավավազներով, հողաբուսական շերտի առկայությամբ: Հողաբուսական շերտի հզորությունը կճշտվի հորատանցքերի հորատման և փորձնական հանույթի արդյունքում երկրաբանական ուսումնասիրության ժամանակ:

Կատարված դաշտային նախնական դիտարկումների արդյունքները վկայում են, որ տեղամասի մարմարացված կրաքարերի հաստվածքը ներկայացված է սակավաթեք (10-15° անկմամբ), շերտանման մարմնի տեսքով, որը մեղմաթեք անկում է դեպի հարավ-արևմուտք:

Հանքերևակման տեղամասի սահմաններում և հարակից տարածքում ըստ ֆոնդային նյութերի տվյալների կարստառաջացման ու սողանքային երևույթներ, ինչպես նաև տեկտոնական խախտումներ չեն գրանցվել:

### 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԸ

ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Գիրաթադի մարմարացված կրաքարերի հանքերնակման 1-ին և 2-րդ տեղամասերի երկրաբանական ուսումնասիրության ներկայացվող ծրագիրը կազմվել է հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, մարմարացված կրաքարերի հետախուզվող ծածկոցի մեղմաթեք տեղադրումը և մորֆոլոգիական ձևը, տարածքի չափերը, տեղանքի հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական և երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները:

Հետախուզական ցանցի խտությունն ընտրվել է համաձայն, Շինարարական և երեսապատման քարերի հանքավայրերի դասակարգման կիրառման հրահանգի հանձնարարականների (ՏԿԵ նախարարի 11.08.2021թ. №06-Ն հրաման). Ուսումնասիրվող տեղամասն ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության ու երկրաբանական հայտանիշների փոփոխականության աստիճանի, վերագրվում է 1-ին խմբի 1բ ենթախմբին՝ հորիզոնական տեղադրմամբ շերտաձև մարմիններ՝ տեկտոնական գործընթացներով չխախտված կամ թույլ խախտված:

Նկատի ունենալով տեղամասի պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մորֆոլոգիական ձևը և չափսերը, ինչպես նաև երկրաբանահետախուզական աշխատանքների համար ընտրված տարածքի չափսերը, հետախուզումը նախատեսվում է իրականացնել մինչև 20մ խորությամբ 10 հորատանցքերի, փորձնական բացահանքերի, մերկացումների ուսումնասիրության միջոցով, նմուշարկման զուգորդությամբ:

Հորատանցքերի տեղադիրքի ընտրության ժամանակ հաշվի են առնվել ուսումնասիրության համար հատկացված տարածքի եզրագծերը, ջրային հողերի, տրանսպորտային կառույցների և էլեկտրահաղորդման գծերի առկայությունը և ելնելով՝ ՀՀ կառավարության 13.04.2023թ. N523-Ն "Էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների կանոնները հաստատելու մասին", ՀՀ կառավարության 2005թ. «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշումների, և «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի պահանջներից **թողնվել է** Գիրաթադ գետակից 32-36մ, Վերին Գիրաթադ տանող համայնքային ճանապարհից 1-ին տեղամասը 32մ, 2-րդ տեղամասը 45մ, 220կվ էլեկտրահաղորդման գծից 1-ին տեղամասը 50-55մ, 2-րդ տեղամասը 25-30մ, 400կվ նոր կառուցվող էլեկտրահաղորդման գծից 1-ին տեղամաս 115-120մ, 2-րդ տեղամասը 45-160մ հեռավորություններ:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների, քիմիական և միներոլոգիական ուսումնասիրությունների նպատակով նախատեսվում է վերցնել նմուշներ՝ մերկացումներից 2 նմուշ, փորձնական բացահանքերից 1-ական նմուշ և հորատանցքերից 38 հանուկային նմուշ, յուրաքանչյուրը 5մ երկարությամբ: Մերկացումներից և փորձնական բացահանքից վերցված նմուշներից նախատեսվում է

կազմել 2 համախառը նմուշ, յուրաքանչյուրի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 15կգ-ի:

Ստուգիչ անալիզների համար նախատեսվում է վերցնել 4 նմուշ, 2-ը հորատանցքերից, 2-ը փորձնական բացահանքերից: Նմուշների ընդհանուր քանակը կկազմի 48 (38 հատ հորատանցքերից, 2 հատ մերկացումներից, 2 համախառը նմուշ, 2 նմուշ փորձնական բացահանքից և 4 ստուգիչ նմուշներ):

Մերկացումներից և փորձնական բացահանքից նմուշարկումը պետք է կատարվի ակոսային եղանակով: Նմուշները պետք է վերցվեն օգտակար հանածոյի շերտին ուղղահայաց:

Պիտանի բլոկների ելքը լեռնազանգվածից որոշելու նպատակով նախագծով նախատեսվում է յուրաքանչյուր տեղամասում իրականացնել փորձնական բացահանքի անցում: Լեռնազանգվածից մենաքարերի պոկումը կատարվելու է մեխանիկական, հորատասեպային եղանակով, օգտագործելով բնական ձեղքերը: Մենաքարերը կենթարկվեն շտկամշակման ԳՕՇ 9479-2014-ի տեխնիկական պահանջներին համապատասխան բլոկների ստացման նպատակով:

Նախատեսված աշխատանքների կատարումը հնարավոր կդարձնի տալ օգտակար հանածոյի որակական գնահատականը, ինչպես նաև համաձայն վերը նշված Հրահանգի և հաշվի առնելով, որ հետախուզավորվածքների միջև հեռավորությունները տատանվում են 71.5-259մ սահմաններում, հնարավոր է հետախուզված պաշարները գնահատել արդյունաբերական B կարգով:

Հետախուզական աշխատանքները կկատարվեն սյունակային հորատման 10 ուղղաձիգ հորատանցքերով՝ օգտագործելով փորձնական բացահանքի և մերկացումների երկրաբանական տվյալները: Հորատման աշխատանքների ընդհանուր ծավալը կազմում է 200.0մ: Հորատանցքերի հորատումը կատարվելու է հորատող հաստոցով, 93մ սորամագծով: Հանուկի ելքն օգտակար հաստվածքից պետք է լինի 85-98% սահմաններում /միջինը 95%/:

Մարմարացված կրաքարերի քիմիական կազմի ուսումնասիրությունը կկատարվի 4 նմուշներով, որոնցից 2-ը կվերցվի բացահանքերից: Պետրոգրաֆիական նկարագրությունը կիրականացվի տեղամասերի հորատանցքերից վերցված 4 /յուրաքանչյուր տեղամասից 2-ական նմուշ/ նմուշներից պատրաստված շիֆների հիման վրա:

Երկրաբանահետախուզական աշխատանքների թույլտվություն ստանալուց հետո ընկերության մասնագետների կողմից կատարվի 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ, որի հիմքի վրա դաշտային աշխատանքների ավարտից հետո գործիքային եղանակով կտեղադրվեն բոլոր հետախուզական փորվածքները, փորձնական բացահանքի եզրագծերը, կճշտվեն ապարների երկրաբանական սահմանները:

Նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքների մեթոդիկական և ծավալները համապատասխանում են «Շինարարական և երեսապատման քարերի հանքավայրերի դասակարգման կիրառման» հրահանգի հանձնարարականներին, ապահովում են օգտակար հանածոյի որակի և քանակի վերաբերյալ անհրաժեշտ երկրաբանական տվյալների ստացումը, և բավարար են հետազայում տեղամասի

մարմարացված կրաքարերի պաշարների հաշվարկման և երկրաբանատնտեսական գնահատման համար:

### **3.1. Երկրաբանահանույթային աշխատանքներ**

Տեղամասերի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով տեղամասերի 3.23հա /1-ին տեղամաս/ և 6.60հա /2-րդ տեղամաս/ տարածքների վրա կատարված տոպոգրաֆիական հանույթի արդյունքում կազմված տոպոհիմքերի վրա կտեղադրվեն բոլոր հետախուզական փորվածքները և նմուշարկման տեղերը, կճշտվեն ապարների երկրաբանական սահմանները:

### **3.2. Հորատանցքերի հորատում**

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատել 10 հորատանցք /1-ին տեղամասում 4 հորատանցք, 2-րդ տեղամասում 6 հորատանցք/՝ յուրաքանչյուրը 20մ խորությամբ, ընդհանուրը 200.0մ ծավալով:

Հորատումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված խմբի կողմից՝ ժամանակակից ինքնագնաց հորատող հաստոցով կարծր համաձուլվածքային թափկներով 93մ տրամագծով:

Օգտակար հանածոյի հորատահանուկի գծային ելքը պետք է կազմի 85-98%, միջինը 95%:

### **3.3. Փորձնական բացահանքերի անցում**

Տեղամասերի մարմարացված կրաքարերի բլոկի ելքի տոկոսի որոշման նպատակով լեռնային զանգվածից նախատեսվում է տեղամասերում անցնել փորձնական բացահանքեր:

1-ին տեղամասում նախատեսվում է անցնել 3-րդ հորատանցքից դեպի հարավ-արևելք /տեղը կճշտվի հորատանցքերի հորատման արդյունքների հիման վրա/,  $20 \times 4.0 \times 4.20 = 336 \text{մ}^3$  ծավալով /երկարությունը 20մ, առաջխաղացումը 4,0մ, հզորությունը 4.20մ/, որից  $23.2 \text{մ}^3$  լանջային փուխր նստվածքներ՝ հողաբուսական նյութի խառնուրդով,  $168 \text{մ}^3$  խիստ ճեղքավորված մարմարացված կրաքարերից («փուշտա») և  $144.8 \text{մ}^3$  չհողմնահարված թարմ մամարացված կրաքարերից: Այս ծավալները կհեռացվեն և առանձին կկուտակվեն բացահանքի անմիջական հարևանությամբ, հետագայում կօգտագործվեն խախտված տարածքների ռեկուլտիվացիայի համար:

2-րդ տեղամասում նախատեսվում է անցնել 7-րդ հորատանցքից դեպի արևմուտք /տեղը կճշտվի հորատանցքերի հորատման արդյունքների հիման վրա/,  $20 \times 4.5 \times 4.20 = 378 \text{մ}^3$  ծավալով /երկարությունը 20մ, առաջխաղացումը 4,5մ, հզորությունը 4.20մ/, որից  $27.0 \text{մ}^3$  լանջային փուխր նստվածքներ՝ հողաբուսական նյութի խառնուրդով,  $201.6 \text{մ}^3$  խիստ ճեղքավորված մարմարացված կրաքարերից («փուշտա») և  $149.4 \text{մ}^3$  չհողմնահարված թարմ մամարացված կրաքարերից: Այս ծավալները կհեռացվեն և առանձին կկուտակվեն բացահանքի անմիջական հարևանությամբ, հետագայում կօգտագործվեն ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ:

Պիտանի բլոկների ելքը լեռնազանգվածից որոշելու նպատակով փորձնական բացահանքից մենաքարերի պոկուրը կկատարվի մեխանիկական, հորատասեպային եղանակով, օգտագործելով բնական ճեղքերը, որոնք կենթարկվեն շտկամշակման ԴՕՇ 9479-2014-ի տեխնիկական պահանջներին համապատասխան բլոկների ստացման նպատակով:

Բլոկներից երեսպատման սալիկների ելքի որոշման նպատակով կիրականացվի ընդհանուր 60մ<sup>3</sup> ծավալով բլոկների փորձնական սղոցում ընկերության քարամշակման արտադրամասում:

### **3.4. Լեռնային փորվածքների փաստագրում**

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները՝ հորատանցքերը, փորձնական բացահանքը և մերկացումները:

Փաստագրման աշխատանքները կկատարվեն երկրաբանի կողմից:

Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 100 մասշտաբով:

### **3.5. Նմուշարկում**

- Ծրագրով նախատեսվում է Ներքին Գիրաթադի մարմարացված կրաքարերի հանքերնական 1-ին և 2-րդ տեղամասերի հետախուզում որպես հումք երեսապատման և շինարարական իրերի արտադրության համար ըստ ԳՈՍՏ 9479-2014 «Քարաբլար ոկներ բնական քարից՝ երեսապատման իրերի արտադրության համար» տեխնիկական պահանջների, իսկ թափոնները «Խիճ և ավազ գեղազարդային բնական քարից: Տեխնիկական պայմաններ» 22856 ԳՈՍՏ-ի տեխնիկական պահանջների ղեկորատիվ խճի արտադրության համար:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրման նպատակով ըստ ներկայացվող ծրագրի հորատանցքերի հանուկից կնմուշարկվի 38 հանուկային նմուշներ /հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը 5 մ-ի սահմաններում/, 4 մենաքարեր (2-ը մերկացումներից, 2-ը բացահանքից), 2 համախառը նմուշ և 4 ստուգիչ նմուշներ:

Մարմարացված կրաքարերի քիմիական կազմը կուսումնասիրվի 4 նմուշներով /յուրաքանչյուր տեղամասից 2 նմուշ/, որոնցից երկուսը կվերցվի բացահանքերից, մյուս 2-ը հորատահանուկից: Պետրոգրաֆիական նկարագրությունը կտրվի հորատահանուկից վերցված 4 նմուշներից պատրաստված հղկուկների հիման վրա:

Ընդհանուր առմամբ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար նախատեսվում է վերցնել 48 նմուշ, այդ թվում 38 հանուկային, 4 ակոսային, 2 համախառը և 4 ստուգիչ նմուշներ, որոնք կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների:

Մարմարացված կրաքարերի քիմիական կազմի որոշման նպատակով նախատեսվում է վերցնել 4 նմուշ՝ այդ թվում 2-ը հորատահանուկից, 2-ը ակոսային նմուշներից:

Նախատեսվում է կատարել նաև ապարակագմական /պետրոգրաֆիական/ հետազոտություններ, որի համար պետք է պատրաստվի 4 հոկուկ /յուրաքանչյուր տեղամասից 2-ական նմուշ/: Պետրոգրաֆիական և քիմիական ուսումնասիրությունները կկատարվեն ՀՀ ԳԱ երկրաբանական ինստիտուտում, ֆիզիկամեխանիկական փորձարկումները՝ լիցենզավորված լաբորատորիաներում:

### **3.5.1. Հորատհանուկի նմուշարկում**

Հորատումից ստացված ամբողջ հորատհանուկը ենթարկվում է նմուշարկման: Նմուշարկումը սեկցիոն է: Հորատհանուկի միջին տրամագիծը 93մմ է: Կնմուշարկվեն հորատման ամբողջ ծավալի 95%-ը արմատական ապարներում:

Հորատհանուկի ամբողջ ծավալը 5մ նմուշի միջին երկարության դեպքում կկազմի՝  
 $200 \times 95\% = 190$  զժ.մ նմուշ կամ  $190 : 5 = 38$  նմուշ:

Վերցված նմուշները կհամարակալվեն և կդասավորվեն հորատհանուկի համար նախատեսված արկղներում և կուղարկվեն լաբորատորիա, հետազոտությունների համար:

### **3.5.2. Ակոսային և համախառը նմուշարկում**

Մերկացումներից և փորձական բացահանքերից նախատեսվում է  $(2.0 \times 0.1 \times 0.05)$ մ<sup>3</sup> չափի 4 ակոսային նմուշների վերցնում՝ այդ թվում 2-ը մերկացումներից, 2-ը բացահանքերից: Ակոսային նմուշարկումը կկատարվի օգտակար հանածոյին ուղղահայաց և ամբողջ հզորությամբ:

Նախատեսվում է վերցնել 2 համախառը նմուշ մարմարացված կրաքարերից դեկորատիվ խճի ֆիզիկամեխանիկական հատկությունների և խճի ելքի որոշման համար ըստ «Խիճ և ավազ գեղազարդային բնական քարից: Տեխնիկական պայմաններ» 22856 ԳՈՍ-ի:

### **3.6. Լաբորատոր ուսումնասիրություններ**

Նախատեսվում է կատարել օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական քիմիական, պետրոգրաֆիկական ուսումնասիրություններ: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացում վերցված բոլոր 48 նմուշները կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների:

Նախքան լաբորատորիա ուղարկելը նմուշները տեղում կենթարկվեն մշակման, կհամարակալվեն, կտեղավորվեն՝ հանուկները արկղների մեջ, իսկ ակոսային նմուշները միանգամյա կրճատման միջոցով քաշը կհասցվի 15 կգ-ի, որը կլցվի առանձին պարկերի մեջ, կպիտակավորվի նոր միայն կուղարկվի լաբորատորիա լրիվ ծրագրով ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար:

Վերցրած 48 նմուշները /այդ թվում 4 ստուգիչ նմուշները/ լիցենզավորված լաբորատորիայում կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների, որոշելու համար մարմարացված կրաքարերի համապատասխանությունը ԳՈՍ 9479-2014 «Քարաբլոկներ բնական քարից՝ երեսապատման իրերի արտադրության համար»

տեխնիկական պահանջների, իսկ արտադրական թափոնները՝ «Խիճ և ավազ գեղազարդային բնական քարից: Տեխնիկական պայմաններ» 22856 ԳՈՍՏ-ի տեխնիկական պահանջներին:

Քիմիական /4 նմուշ/ և պետրոգրաֆիական /4 նմուշ/ հետազոտությունները կկատարվեն ՀՀ ԳԱ երկրաբանական ինստիտուտում, իսկ ֆիզիկամեխանիկական և ստուգիչ հետազոտությունները լիցենզավորված լաբորատորիայում:

Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով:

### **3.7. Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ**

Ուսումնասիրվող տեղամասում նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ տեղամասի տարածքի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/ պարզաբանելու համար:

Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել՝ տեղամասի ապարների կազմը, ապարների ճեղքավորվածությունը, ապարների կառուցվածքային առանձնահատկությունները, անիզոտրոպիան, պարզաբանել տեղանքի գեոդինամիկ պրոցեսները:

Հիդրոերկրաբանա հետազոտություններով նախատեսվում է՝ հետազոտել հիմնական ջրատար հորիզոնները, եթե այդպիսիք կան ուսումնասիրել և նկարագրել դրանք, ուսումնասիրել ջրի որակը, կատարել ռեժիմային դիտարկումներ:

Դիտարկումները նախատեսվում է կատարել ամիսը մեկ անգամ:

### **3.8. Ռադիոմետրական ուսումնասիրություններ**

Անցած լեռնային հորատանցքերը, մերկացումները և փորձնական բացահանքը պետք է ենթարկվեն ռադիոմետրական չափումների, ապարի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար: Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված և լիցենզավորված խմբի կողմից:

Ստորև, աղյուսակ 1-ում բերվում է նախագծով նախատեսվող աշխատանքների աշխատանքների ծավալները.

**Աղյուսակ 1**

#### **Հետախուզվող տեղամասում նախատեսվող աշխատանքների ծավալները**

Հ/հ	Աշխատանքների բնույթը	Չափման միավորը	Ծավալը
1	2	3	4
1.	Տոպոհանույթ՝ 1:1000 մասշտաբի	հա	9.83
2.	Հորատանցքերի հորատում և փաստագրում	գծ.մ	200

3.	Լեռնային փորվածքների փաստագրում	զծ.մ	280
4.	Փորձնական բացահանքի անցում		
	- 1ին տեղամաս	մ <sup>3</sup>	336
	- 2-րդ տեղամաս	մ <sup>3</sup>	378
5.	Նմուշարկում`		
	հանուկային	նմուշ	38
	ակոսային	նմուշ	4
	- համախառը	նմուշ	2
	- ստուգիչ	նմուշ	4
7.	Լաբորատոր հետազոտություններ, այդ թվում		
	Ֆիզ. մեխ. փորձարկումներ /այդ թվում 3 ստուգիչ/	նմուշ	48
	Քիմիական անալիզներ	նմուշ	4
	Միներալո-պետրոգրաֆիական ուսումնասիրություններ	հղկուկ	4
8.	Հորատահրապարակների կառուցում	մ <sup>2</sup> /մ <sup>3</sup>	350/105
9.	Խախտված հողերի ռեկուլտիվացիա	մ <sup>2</sup> /մ <sup>3</sup>	510/524.8
10.	Ճառագայթահիգիենիկ իրավիճակի գնահատում	-	+
11.	Հանքավայրի արդյունաբերական գնահատում	-	+
12.	Հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական հետազոտություններ	-	+
13.	Հաշվետվության և ՏՏՀ-ի կազմում	հաշվ.	+

### 3.9. Հորատման հրապարակների և ճանապարհների կառուցում

Նախատեսվում է 10 հորատման հրապարակների կառուցում և դրանց մոտեցման ճանապարհների կարգաբերում մեխանիկական եղանակով` 4-րդ կարգի ապարներում: Այդ աշխատանքների ծավալները ստորաբաժանվում են`

#### - Հորատման հրապարակների կառուցում

Կկառուցվի 10 հորատման հրապարակ, յուրաքանչյուրը 35մ<sup>2</sup> մակերեսով:  
Ընդհանուր մակերեսը կկազմի`  $10 \times 35 = 350 \text{մ}^2$ ,

Հորատահրապարակների կառուցման ժամանակ անհրաժեշտ կլինի հեռացնել հողաբուսական շերտի հետ խառը լանջային փուխը նստվածքները որի հզորությունը նախնական դիտարկումներով տեղամասերում կազմում է 0,25-0,35մ միջինը 0.3մ /հողաբուսական շերտի հզորությունը կճշտվի հորատանցքերի հորատման և փորձնական հանույթի արդյունքում/: Հորատահրապարակների ծավալը կկազմի  $350 \times 0.3 = 105.0 \text{մ}^3$

#### - Ճանապարհների կառուցում

Օրագրով նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղանքում կան հանդամիջյան գրունտային ճանապարհներ, որոնք բարենպաստ են և ընկերությունը կօգտվի այդ ճանապարհներից:



Եթե աշխատանքների իրականացման ժամանակ պարզվի, որ ճանապարհի որոշ հատվածներ ոչ բարենպաստ են, այդ դեպքում կկատարվի մասնակի վերանորոգում, առանց լրացուցիչ ծախսերի:

### 3.10. Բեռների և ուղևորների փոխադրում

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հորատման գործիքների ներկրում տարածք, նմուշների տեղափոխում լաբորատորիյա, փորձնական հանույթից ստացված բլոկներից մոտ 60մ<sup>3</sup> տեղափոխում ընկերության քարամշակման արտադրամաս և աշխատակիցների փոխադրումը կկատարվի ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով: Տրանսպորտային ծախսերն ընդունվում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 10%-ի չափով: Մակաբացման ապարների կամ այլ թափոնների դուրս բերում ուսումնասիրության տարածքից չի նախատեսվում:

### 3.11. Խախտված տարածքների ռեկուլտիվացիա

Ռեկուլտիվացիայի նպատակով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողաբուսական շերտի հետ խառը լանջային փուխր նստվածքները պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով հետ փռել:

Հորատահարթակների ռեկուլտիվացիայի ընդհանուր ծավալը կազմում է.

$$350\text{մ}^2 \times 0.3\text{մ} = 105\text{մ}^3:$$

Փորձնական բացահանքերի անցման ժամանակ առաջանում է վերականգնման ենթակա 191.2մ<sup>3</sup> լեռանյին զանգված 1-ին տեղամասում և 228.6մ<sup>3</sup> 2-րդ տեղամասում, այդ թվում լանջային փուխր նստվածքներ՝ հողաբուսական շերտի խառնուրդով 23,2մ<sup>3</sup> 1-ին տեղամասում և 27,0մ<sup>3</sup> 2-րդ տեղամասում, փուշտան 168մ<sup>3</sup> 1-ին տեղամասում և 201.6մ<sup>3</sup> 2-րդ տեղամասում:

Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 510մ<sup>2</sup> /հորատահարթակներ-350մ<sup>2</sup>, փորձնական բացահանքեր 160մ<sup>2</sup>/:

Վերականգնման ենթակա ծավալը կկազմի 524.8մ<sup>3</sup> /հորատահարթակներ – 105մ<sup>3</sup>, փորձնական բացահանք – 191.2մ<sup>3</sup> 1-ին տեղամասում և 228.6մ<sup>3</sup> 2-րդ տեղամասում/:

Այդ ծավալները կարճաժամկետ կուտակվում են խախտված տարածքների անմիջական հարևանությամբ առանձին-առանձին և աշխատանքների անմիջապես ավարտից հետո ամբողջությամբ օգտագործվելու են խախտված հողատարածքների վերականգնման համար: Աշխատանքները կատարվելու են մեխանիկական եղանակով: Ռեկուլտիվացման աշխատանքները կանոնակարգվում են՝ ՀՀ կառավարության 14.12.2017թ. թիվ 1643-Ն որոշման պահանջների համապատասխան:

Փորձնական բացահանքերի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու են հետևյալ հերթականությամբ՝ նախ բացահանքի հատակին կփովեն 168մ<sup>3</sup> խիստ ճեղքավորված մարմարացված կրաքարերը («փուշտա») կհարթեցվեն որի վրա այնուհետ, 0.29մ բարձրությամբ շերտով, կփովեն առանձին կուտակված 23.2մ<sup>3</sup>

հողաբուսական նյութի խառնուրդով լանջային փուխր սստվածքներ 1-ին տեղամասում և 2-րդ տեղամասում՝ 201.6մ<sup>3</sup> խիստ ճեղքավորված մարմարացված կրաքարերը («փուշտա») կհարթեցվեն որի վրա այնուհետ, 0.3մ բարձրությամբ շերտով, կփռվեն առանձին կուտակված 27մ<sup>3</sup> հողաբուսական նյութի խառնուրդով լանջային փուխր սստվածքները:

Հեռացված ապարների տեղափոխումը և հարթեցումը կկատարվի բուլդոզերի օգնությամբ:

Խախտված տարածության լեռնատեխնիկական վերականգնման համար ծախսերի խոշորացված հաշվարկները, կատարված ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1352-Ն որոշման պահանջներին համապատասխան տրված են ստորև:

Աշխատանքների արժեքի կառուցվածքը ներկայացվում է հետևյալ բանաձևով՝

$Ա = \Sigma \mathcal{O} + \mathcal{C} + \mathcal{Z} + \mathcal{O}n + \mathcal{O}m$  որտեղ՝

Ա – աշխատանքների արժեքն է

$\Sigma \mathcal{O}$  – ռեկուլտիվացիոն աշխատանքների բոլոր միջոցառումների ծախսերի հանրագումարն է

$\mathcal{C}$  - ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար նախատեսված շահույթն է

$\mathcal{Z}$  - ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար նախատեսված հարկերն են

$\mathcal{O}n$  - ռեկուլտիվացիոն աշխատանքների նախագծման ծախսերն են

$\mathcal{O}m$  - ռեկուլտիվացիոն աշխատանքների մեղմացման միջոցառումների ծախսերն են:

Աշխատանքների արժեքի հաշվարկներն իրականացվում են՝ ընդգրկելով հողերի ռեկուլտիվացման տեխնիկական և կենսաբանական փուլերի աշխատանքների բոլոր միջոցառումների հետևյալ ծախսատեսակները՝

1) նյութերի արժեքը. Աղ 1

2) Աշխատավարձը. Աղ. 2

3) մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեքը. Աղ. 3

4) հարկեր, այլ ծախսեր, անուղղակի ծախսերը աղ. 4

5) նախագծման ծախսերը-չեն հաշվարկվել, քանի որ առանձին ռեկուլտիվացիայի նախագիծ չի ներկայացվում

**Խախտված հողատարածքների վերականգնման ծախսերի խոշորացված հաշվարկները նյութերի ծախսի հաշվարկը**

*աղյուսակ 1*

Աշխատանքի անվանումը, օգտագործվող սարքավորումը	Ծախսվող նյութի անվանումը	Նյութերի ծախսերը, Լ	Նյութերի արժեքները	
			միավորի արժեքը, դրամ	ընդհանուր արժեքը, հազ. դրամ
Հեռացված ապարների ետ փռում և հարթեցում (բուլդոզերով)	դիզ. վառելիք	160	500	80.0
	դիզ. յուղ	2	3500	7.0
	այլ քսուքներ	1	3000	3.0
<b>Ընդամենը</b>				<b>90.0</b>

**Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը**

աղյուսակ 2

Պաշտոնը կամ մասնագիտությունը	Աշխատանքի տևողությունը, ամիս	Քանակը	Ամսական աշխատավարձը, հազ. դրամ	Աշխատավարձի ֆոնդը, հազ. դրամ
Տեղամասի պետ	0.5	1	200.0	100.0
Բուլդոզերավար	0.5	1	200.0	100.0
Ընդամենը	1.0	2	400.0	200.0

**Ամորտիզացիոն ծախսերի հաշվարկը**

աղյուսակ 3

Մեխանիզմի անվանումը	Քանակը հատ	Հաշվեկշռային արժեքը հազ. դրամ	Ամորտիզացիայի %-ը	Ամորտիզացիայի տարեկան գումարը, հազ.դրամ	Ամորտիզացիայի ամսական գումարը, հազ. դրամ	Ամորտիզացիայի Ընդհանուր գումարը, հազ.դրամ
Բուլդոզեր	1	5 000	10	500.0	41.7	1.9
Ընդամենը						1.9

**Շահագործման ծախսերի նախահաշիվ**

աղյուսակ 4

Ծախսերի հոդվածները	Նորմը %	Չափման միավորը	Գումարը հազ. դրամ
Նյութեր	-	հազ. դրամ	90.0
Աշխատավարձ	-	հազ. դրամ	200.0
Սոց. ապահովման փոխանցումներ	8	հազ. դրամ	16.0
Ամորտիզացիա	-	հազ. դրամ	1.9
Ընդամենը		հազ. դրամ	307.9
Անուղղակի ծախսեր	10	հազ. դրամ	30.8
Ընդամենը		հազ.դրամ	338.7
Չնախատեսված ծախսեր	10	հազ.դրամ	33.9
Ընդամենը		հազ.դրամ	372.6
Շահութահարկ	10	հազ.դրամ	37.3
Ամբողջը		հազ.դրամ	409.9
1մ <sup>2</sup> մակերեսի վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ ծախսը	-	դրամ	803.7

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա: Իբրև կենսաբանական ռեկուլտիվացիայի եղանակ կարելի է կիրառել հիդրոցանքի եղանակը:

Լուծույթի պատրաստման համար՝

- բենտոնիտի փոշին՝ խառնում են ջրի հետ 12-15 ժամվա ընթացքում;
- այնուհետև ավելացնում են հանքային պարարտանյութը և սերմերի տեսակները:

Նյութերի տեսակարար ծախսերը և կենսաբանական ռեկուլտիվացիայի արժեքը հաշվարկվել են բենտոնիտային կավերի, հանքային պարարտանյութի, սերմերի, ոռոգման ջրի մոտավոր ծավալների և տրանսպորտային ծախսերի հիման վրա

1հա տարածքի կենսաբանական ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ նյութերի ծախսերը

h/h	Նյութերի անվանումը	Նյութերի ծախսը			
		ծախսը 1մ <sup>3</sup> լուծույթի պատրաստման համար, կգ/ մ <sup>3</sup>	ծախսը 1հա-ի համար կգ/ հա	1կգ նյութի գինը, դրամ	1հա արժեքը Հազ. դրամ
1	Բենտոնիտային կավի փոշի	38	1900	50	95.0
2	Սերմեր	1.5	75.0	150	11.3
3	Միներալային պարարտանյութ (սելիտրա)	4.5	220.0	140	30,8
4	Տեխնիկական ջուր	955	47750.0	11	0.6
	ընդամենը				138.4
5	Տրանսպորտ. ծախսեր 15%				20.8
	Ամբողջը				158,5

*1հա տարածքի կենսաբանական ռեկուլտիվացիայի ծախսերի նախահաշիվ*

Ծախսերի հոդվածները	նորմը%	Չափման միավորը	Գումարը հազ. դրամ 1հա վրա
Նյութեր	-	հազ. դրամ	158,5
Աշխատավարձ	-	հազ. դրամ	15.0
Ընդամենը ուղղակի ծախսեր	-	հազ. դրամ	173,5
Անուղղակի ծախսեր	5	հազ. դրամ	8,5
Ամբողջը	-	հազ. դրամ	182,0
Շահույթ	10	հազ. դրամ	18,0
Լրիվ	-	հազ. դրամ	200.0

Կենսաբանական ռեկուլտիվացման ծախսը կկազմի

$$0.051\text{հա} \times 200\ 000\ \text{դրամ/հա} = 10.2\ \text{հազ. դրամ:}$$

Ընդամենը լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝  $409.9 + 10.2 = 420.1\ \text{հազ.դրամ:}$

**3. 11. Փոխհատուցում հողօգտագործման համար**

Երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ ժամանակա-վորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կազմում է՝ հորատահրապարակներ –  $35 \times 10 = 350\text{մ}^2$  կամ  $0.035\text{հա}$ , փորձնական բացահանք –  $160\text{մ}^2$  կամ  $0.016\text{հա}$ : Ընդամենը –  $0.051\text{հա}$ :

Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքներին կկազմի  $0.051\text{հա} \times 450000 = 22950\ \text{դրամ:}$

**Ջրամատակարարումը և ջրհեռացումը**

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեղադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվում է ջրցան-վացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ՍՊ-ԵԱԲ-1.4 ջրի ցիստեռնով:

Աշխատողներին խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) T$$

որտեղ՝ n - ԻՏ - 2,

N - ԻՏԱ աշխատողների ջրածախսի նորման՝  $0.016\text{մ}^3$ ,

$n_1$  - բանվորների թիվն է - 4,

$N_1$  -բանվորների ջրածախսի նորման՝ - 0.025մ<sup>3</sup>/մարդ օր

T – դաշտային աշխատանքային օրերի թիվն է - 60օր:

Այսպիսով՝  $W = (2 \times 0.016 + 4 \times 0.025) \times 60 = 7.92$ մ<sup>3</sup>, միջին օրեկան 0.132մ<sup>3</sup>: Կենցաղային կեղտաջրերը՝  $0.132 \times 0.85 = 0.11$ մ<sup>3</sup> օրեկան լցվում են 2.0մ<sup>3</sup> բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվում են սահմանված կարգով: Դաշտային աշխատանքների ավարտին բետոնյա լցարանը հանվում և հեռացվում է տարածքից:

Համաձայն նորմատիվների ջրի ծախսը 1մ<sup>2</sup> տարածքում փոշին նստեցնելու համար կազմում է 0.5լիտր/մ<sup>2</sup>: Փոշենստեցման մակերեսները կազմում են հորատահրապարակների, փորձնական բացահանքերում աշխատանքային հրապարակների 510 մ<sup>2</sup>, ժամանակավոր լցակույտերի վրա 200մ<sup>2</sup>, և ավտոճանապարհների վրա 2000մ<sup>2</sup>, ընդամենը 2710մ<sup>2</sup>: Ընդունելով ջրի տեսակարար ծախսը 0.5լ/մ<sup>2</sup>, կատանանաք.  $2710 \times 0.5 = 1355$ լիտր

Նախատեսվում է 1 ջրող ավտոմեքենա 5տ ջրի տարողությամբ, որը այդ ջուրը ցնցուղում է 1երթով, աշխատանքային հրապարակը և ավտոճանապարհները կարող է ջրել 2 անգամ:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Աշխատանքները կկատարվեն ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների, երկրանախետախուզական աշխատանքների անվտանգության նորմատիվային փաստաթղթերի և այլ նորմատիվային ակտերի համապատասխան:

Սույն ծրագիրը նախատեսում է բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը: Աշխատանքների կազմակերպիչները պարտավոր են.

- կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական վնասվածքների բացառմանը;
- ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով;
- աշխատանքի ընդունվող բոլոր աշխատողների հետ անցկացնել նախնական ուսուցում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ;
- բոլոր մասնագիտությունների գծով աշխատողներին ապահովել աշխատանքների անվտանգ կատարման հրահանգներով;
- բանվորներին ապահովել բանվորական արտահագուստով և անհատական պաշտպանիչ միջոցներով;
- տրանսպորտային և հորատման մեքենաների և մեխանիզմների ղեկավարումը թույլատրել այն անձանց, որոնք անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեքենաները կամ մեխանիզմները ղեկավարելու իրավունքի վկայական:

Աշխատանքների ընթացքում՝ պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները

Հորատանցքերի հորատման և փորձնական հանույթի ժամանակ հաշվի առնելով ՀՀ կառավարության 13.04.2023թ. N523-Ն "Էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների կանոնները հաստատելու մասին", որոշման պահանջները խստորեն ապահովել գործող 220կվ էլեկտրահաղորդման գծից ոչ պակաս 25մ, նոր կառուցվող 400կվ էլեկտրահաղորդման գծից ոչ պակաս 30մ հեռավորություններ:

## ՄՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները իրականացվելու են Քաջարան խոշորացված համայնքի Լեռնաձոր բնակավայրի /Ներքին Գիրաթադի գյուղի մոտ/ վարչական տարածքում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը որոշակի ազդեցություն կունենա նաև ազդակիր համայնքի մարդկանց կյանքի և պայմանների վրա: Աշխատանքների թափանցիկությունն ու համայնքների իրազեկվածությունն ապահովելու նպատակով՝ Կապանի «նորոգչին» ՄՊ ընկերության կողմից «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, իրականացվել են հանրային լսումներ և քննարկում, որոնց ընթացքում դիտարկվել են համայնքներին աջակցության հնարավոր միջոցառումները:

Երկրաբանահետախուզական աշխատանքների փուլում կատարվելու է համայնքի տնտեսական զարգացման ուղղվածության և հնարավոր զարգացման ուղղությունների վերաբերյալ ելակետային պայմանների հավաքագրում, որոնք հետագա շահագործական աշխատանքների ժամանակ հիմք կհանդիսանան համայնքում աջակցության երկարաժամկետ ծրագրերի մշակման համար:

Սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերը պետք է միտված լինեն մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես.

- նոր աշխատատեղերի ստեղծում: Երկրաբանահետախուզական, ինչպես նաև հետագա արդյունահանման աշխատանքների ընթացքում բազմաթիվ օժանդակ աշխատանքների (օրինակ վարորդներ, տեխնիկական ջրի մատակարարում, և այլն) իրականացման համար հատուկ մասնագիտական կրթություն չի պահանջվում: Հետևաբար, այդ աշխատանքներին ներգրավվելու են ազդակիր համայնքների բնակիչները, ինչը կստեղծի բնակիչների զբաղվածություն և լրացուցիչ եկամուտ ընտանիքների համար: Միաժամանակ, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնող անձնակազմի սննդի ապահովման նպատակով գնումներ են կատարվելու հենց համայնքներում, ինչը նույնպես դրական ազդեցություն է ունենալու ապրանքաշրջանառության ծավալի, տեղական արտադրանքի սպառման շուկայի վրա:

- համայնքների տնտեսական ուղղվածության շրջանակներում նոր, ընդերքօգտագործման հետ չկապակցված արտադրանքի ստեղծման շղթայի մշակում և ներդրում հետագա շահագործման փուլում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել կենսաբազմազանության, այդ թվում բուսական ծածկույթի դիտարկում, ուսումնասիրություն համապատասխան որակավորում ունեցող մասնագետների մասնակցությամբ:

Միաժամանակ, Կապանի «Նորոգչին» ՄՊ ընկերությունը նախատեսում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ամբողջական մոնիթորինգ՝ համայնքների բնակիչների, դրանց կենսապայմանների վրա ցանկացած բացասական ազդեցությունների վերահսկման և կանխարգելման նպատակով, որի համար նախատեսում է ներդնել **300.0հազ.դրամ:**

#### 4. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Արդյունահանման նպատակով երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

##### ***Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն***

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. “Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

##### ***Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք***

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277-Ն), «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (08.09.2011թ.-ի N1396-Ն), «Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները եվ խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 750-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» (14.12.2017թ.-ի N1643-Ն) որոշումները:

ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ.-ի N365-Ն “Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը” հաստատելու մասին հրամանն ուժը կորցրած է ճանաչվել շրջակա միջավայրի նախարարի 07.01.2022թ.-ի N6-Ն հրամանով:

**Հանքավայրի շահագործման ժամանակ հողատարածքների օգտագործման հարցերը կարգավորվում են համաձայն հողային օրենսգրքի պահանջների:**

##### ***Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք***

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի

Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

**Նախատեսվող գործունեության ընթացքում ջուրը սահմանափակ ծավալով օգտագործվելու է ջրցան իրականացնելու, ինչպես նաև աշխատողների կենցաղային կարիքների համար:**

#### **Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք**

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. Նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել է “Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման եվ հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի n 1079-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (21.10.2021թ.-ի N1733-Ն) որոշումը:

**Հանքարդյունահանման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել համաձայն այս օրենսգրքի պահանջների:**

#### **Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք**

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջև, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

**Նախագծի գործառույթներն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել աշխատանքային օրենսգրքի պահանջներով:**

**“Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” Հայաստանի Հանրապետության օրենք (2014)**

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր



ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի:

Օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ Օրենքը (ՀՕ – 150-Ն, 3.05.2023թ.)** կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լուսմների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն/ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ./** կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

**Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք /12.12.1992թ./**

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար:

**Աշխատանքների կազմակերպման ժամանակ անձնակազմի սանիտարահամաճարակային անվտանգության խնդիրները պետք է կարգավորվեն ըստ այս օրենքի:**

**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք /04.03.1996թ./**

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական

իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական եւ ֆինանսական հիմունքները:

**Գործունեության իրականացման ընթացքում աշխատողների և մերձակա բնակչության առողջության ապահովման խնդիրները կարգավորվում են սույն օրենքով:**

**«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք**

Օրենքը ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը: .

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

Նախագծի իրականացման ընթացքում պատմամշակութային արժեքների հետ կապված բոլոր խնդիրները պետք է կարգավորվեն ըստ այս օրենքի և ՀԲ պահանջների: Թեկուզ տարածքում պատմամշակութային արժեքներ չեն հայտնաբերվել, անհայտ գտածոների դեպքում գործողությունները պետք է համապատասխանեն օրենքի պահանջներին:

**Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք**

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

**Հանքավայրի շահագործման համար նախատեսված տարածքներում բնական բուսականության պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով:**

**Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք**

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

**Հանքավայրի շահագործման համար նախատեսված տարածքներում վայրի կենդանիների պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով:**

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության

կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

***Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք***

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

**ՀՀ բնապահպանության նախարարը 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է**

**«Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:**

***Շինարարական և կենցաղային թափոնների կառավարումը պետք է իրականացվի ըստ սույն օրենքի պահանջների:***

***Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)***

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

Հանքավայրի շահագործման ընթացքում բնապահպանական օրենսդրության կատարումը վերահսկվելու է բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի կողմից համաձայն սույն օրենքի դրույթների:

***Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք***

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

**Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»:**

**Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»:**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիրուսային) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”:

- ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N71-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կենդանիների Կարմիր Գիրք
- ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր Գիրք
- ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” N 1404-Ն որոշում
- ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014 թվականի “Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին” N 781-Ն որոշում:
  - ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշումը:
  - ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշումը:
  - ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշումը:
  - ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշումը:
  - ՀՀ կառավարության 02.07.2015թ.-ի N731-Ն որոշումը:
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 675-Ն որոշումը
- Շրջակա միջավայրի նախարարի N 369-Ն հրամանը
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 13.04.2023թ. “Էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների կանոնները հաստատելու մասին” N523-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 2005թ. «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշումը,
- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-240-Ն օրենք

## 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### ▪ Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը

Օրոգրաֆիական տեսակետից տեղամասերի շրջանը ներկայացնում է բարձր լեռնային խոր գետահովիտներով կտրտված ռելիեֆով շրջան և մտնում է Ջանգեզուրի ֆիզիկաաշխարհագրական շրջանի ծալքաբեկորային լեռնաշղթաների ենթաշրջանի մեջ և բնութագրվում է տիպիկ լեռնային, ռելիեֆով: Այստեղ գերակշռող է հանդիսանում ռելիեֆի կառուցվածքային տիպը: Այն արդյունք է ալպիական լեռնակազմության ժամանակաշրջանում ծալքավոր կառուցվածքների առանձին բեկորների (բլուկ) ձևավորման, որոնք նորագույն տեկտոնական շարժումների ընթացքում ենթարկվել են տրոհման տարբերակված շարժումների ազդեցության ներքո և բարդացել հետագա արտաձին պրոցեսների ներգործությամբ:

Լեռնալանջերը հիմնականում ունեն մեծ թեքություն, որը 25<sup>0</sup>-ից հասնում է մինչև 45<sup>0</sup> է:

Մարզի գլխավոր գետերը (Ողջի 9.6մ<sup>3</sup>/վրկ, Մեղրի 3.2մ<sup>3</sup>/վրկ, Որոտան- 12.5մ<sup>3</sup>/վրկ) սակավաջուր են, արագահոս: Դրանց դեբիտն ամռանը խիստ ընկնում է:

Դրանք հոսում են հիմնականում նեղ գետահովիտներով և հիմնականում գուրկ են դարավանդներից:

Միայն առանձին հատվածներում գետերը առաջացնում են նստեցման հովիտներ՝ մինչև 10-12մ բարձրության հասնող դարավանդներով:

Մարզը հիմնականում գյուղատնտեսական է: Զարգացած է անասնապահությունը, հողագործությունը, մասնավորապես հացահատիկային կուլտուրաների մշակումը: Գործում են գյուղմթերքների մշակման (զինու, կոնյակի և պահածոների) ձեռնարկություններ: Շրջանի բնակչության մի մասը զբաղվում է շինանյութերի և մետաղային օգտակար հանածոների (ոսկի, պղինձ, մոլիբդեն) արդյունահանմամբ և մշակմամբ: Այստեղ գործում են շինանյութերի արդյունահանման և մշակման մի քանի ձեռնարկություններ:

Շրջանի կլիման չոր մերձարևադարձային է: Ձմեռը կարճատև է, մեղմ: Հաստա-տուն ձնածածկույթ լինում է ոչ ամեն տարի: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է +1<sup>0</sup>C-ից մինչև -1<sup>0</sup>C, նվազագույնը՝ - 27<sup>0</sup>C: Ամառը տևական է, չոր, շոգ եղանակների գերակշռությամբ: Հուլիս-օգոստոս ամիսներին օդի ամսեկան միջին ջերմաստիճանը +24 - 25<sup>0</sup>C է, առավելագույնը՝ 41<sup>0</sup>C: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 500-600մմ է:

Վառելիքաէներգետիկ հումքի և անտառանյութի պահանջները բավարարվում են ներմուծման հաշվին: Շրջանը ապահովված է էլեկտրաէներգիայով, որը մատակարարվում է հանրապետական միացյալ էներգացանցից:

Մարզի բնակչությունը հիմնականում զբաղված է անասնապահությամբ և հողագործությամբ, մասամբ էլ լեռնահանքային արդյունաբերությունում:

Սյունիքի մարզը ընդհանուր առմամբ հայտնի է զարգացած լեռնահանքային արդյունաբերությամբ: Այստեղ գործում են Ջանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային, Շահումյանի ոսկի-բազմամետաղային կոմբինատները:

Շրջանը հայտնի է պղինձ-մոլիբդենային (Ագարակ, Այգեձոր), պղնձի (Լիճք), ոսկի-բազմամետաղային (Լիճվազ-Թեյ, Տերտերասար) արդյունաբերական հանքավայրերով:

Տարածաշրջանի երկրաբանակառուցվածքային առանձնահատկությունների հետ կապված այն հարուստ է նաև տարատեսակ բնական շինանյութերով, հիմնականում գրանիտոիդներով, բազալտներով, հրաբխային խարամներով, ավազներով և այլն, որոնք իրենց դեկորատիվ բարձր հատկությունների շնորհիվ մեծ հետաքրքրություն են առաջացրել հիմնականում վերջին տարիներին: Այստեղ մանրազնին հետախուզվել են Մեղրիի ու Լիճքի պորֆիրանման գրանոդիորիտների, Վարդանաձորի գաբրոների ու գրանոդիորիտների, Մալևի մոնցոնիտների, Ծավի քվարցային դիորիտների, Եղվարդի մարմարացված կրաքարերի և այլ հանքավայրեր:

Շրջանը էլեկտրաֆիկացված և մասամբ գազաֆիկացված է:

Շրջանում առկա է բավականաչափ ազատ աշխատուժ:

#### ▪ **Ռելիեֆ, երկրաձևաբանություն**

Դիտարկվող շրջանը լեռնագրականորեն գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան ճյուղերի ստորոտի մոտակայքում:

Շրջանի ռելիեֆը տիպիկ լեռնային է, որի բացարձակ բարձրությունները տատանվում են 730 մ /Կապան քաղաքի մատույցներում/ մինչև 3249 մ /Բաղաց սար լեռնագագաթ/:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը բարձր լեռնային, խիստ կտրտված ռելիեֆի գոտի է, աչքի է ընկնում ջրբաժանների ու գետահովիտների բացարձակ բարձրությունների մեծ տատանումներով, որտեղ խիստ կտրատված ռելիեֆի շնորհիվ ինտրուզիվ ապարները հաճախ հանդես են գալիս ժայռային մերկացումներով: Տարածաշրջանի հիմնական լեռնագրական միավորները Զանգեզուրի լեռնաշղթայի ճյուղավորումներն են, հյուսիսից Բարգուշատի լեռները, արևմուտքից Մեղրու լեռները, կենտրոնական մասում՝ Խուստուփ-Կատարի լեռները:

Մեղրու լեռնաշղթայի բարձր կատարներն են Բաղաց սար /3249 մ/, Փոքր կապ /3105 մ/, Ճգնավոր /3023 մ/: Բարգուշատի լեռների բարձրագույն կատարները Արամազդն /3399 մ/ և Թառկատարն են /3277 մ/ են, որոնք ընկնում է հանքային հարթակից արևմուտք: Հանքային հարթակի տարածքում են Բարգուշատի լեռների Կապնուսար /2818 մ/, Աճանան /2393 մ/ լեռնագագաթները, որոնց հաջորդող լեռնակատարները աստիճանաբար ցածրանում են: Կապանի հանքային հարթակի կենտրոնական մասում գրավող Խուստուփ – Կատար լեռների բարձրագույն լեռնակատարներն են Խուստուփը /3201 մ/ և Կատարը /3012 մ/:

Շրջանի բարձրլեռնային գոտուն բնորոշ են ռելիեֆի ձևասառցադաշտային ձևերը: Գետերի ակունքներում կան պլեյստոցենյան սառցապատումների հետքեր՝ կառեր ու սառցադաշտային հովիտներ, որոնց մի մասը լցվել է ջրով: Լեռնագագաթներին մնում են ձյան բծեր, որոնցից սկիզբ են առնում բազմաթիվ առուներ: Լեռնալանջերը, մանավանդ հյուսիսային և արևելյան դիրքադրություն ունեցողները, ծածկված են անտառներով: Ռելիեֆին բնորոշ են գոգածալքային հիմքի վրա ձևավորված անհամաչափ լանջերով ծալքաբեկորավոր, էրոզային, տեղատարումային, երբեմն <<շրջված>> ձևերը: Արևելյան

լանջերն աստիճանակերպ իջնում են դեպի գետերի հովիտները և կտրտված են բազմաթիվ վտակների հովիտներով: Չանգեզուրի լեռնաշղթայի հարավային մասը նորագույն տեկտոնական շարժումների հետևանքով բարձրադիր հորստ է՝ կազմված Մեղրու պլուտոնի գրանիտոիդներից: Այստեղ ծալքավորված էոցենի նստվածքահրաբխածին շերտախմբի ու խոշոր ներժայթուք զանգվածի վրա ձևավորվել է ծալքաբեկորավոր, էրոզային տեղատարումային ռելիեֆ: Հարավային լանջերը զառիթափ են, ժայռոտ ու մասնատված: Կատարային մասում հին սառցադաշտային ձևերի հետ միաժամանակ մեծ չափերի են հասնում սառնամանիքային հողմահարումը, էրոզային երևույթները: Հանքավայրի շրջանի երկրաբանական կառուցվածքը բավականին բարդ է:

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ստորին-միջին յուրայի, վերին յուրայի, վերին յուրա-կավճի, ստորին կավճի տարակազմ նստվածքային, հրաբխածին-նստվածքային, հրաբխային առաջացումները, գետահովիտների ցածրադիր մասերում՝ ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ նստվածքները, լայն տարածում ունեն նաև տարակազմ և բազմազան դայկային ու երակային ապարները:


Հանքային դաշտի ապարները ունեն երկրաբանական միջին տարիք Կապանից արևմուտք և հյուսիս՝ ստորին-միջին յուրա /203- 135 մլն տարի/, կազմված ալկրոլիտներից, ավազաքարերից, բազալտներից, անդեզիտներից, ռիոլիտներից, տուֆաբեկչաններից ու տուֆավազաքարերից: Այս հնագույն ապարները բոլոր ուղղություններով շրջապատված են ավելի երիտասարդ՝ վերին յուրայի /175-135 մլն տարի/ ապարներով՝ բազալտներ, անդեզիտներ, տուֆաբեկչաններ, տուֆավազաքարեր, կրաքարեր, դոլոմիտներ, կավային թերթաքարեր: Հանքային հարթակի արևմտյան և հարավային մակերեսները է՛լ ավելի երիտասարդ՝ վերին յուրա-ստորին կավճի /154-135 մլն տարի/ ապարներից են կազմված. բազալտներ, անդեզիտներ, տուֆավազաքարեր, տուֆալկրոլիտներ, կրաքարեր: Շրջանի հարավային մասը սահմանակցում է նույն երկրաբանական ժամանակաշրջանի այլ ապարներով. տոնալիտներ, քվարցային դիորիտներ, լեյկոգրանիտներ: Հանքային հարթակի արևելյան թևը ամբողջությամբ և արևմտյան սահմանագիծը մի նեղ շերտով կազմված են ստորին կավճի /135-96 մլն տարի/ ապարներից. ալկրոլիտներ, փոխակերպված թերթավոր կրաքարեր, տուֆավազաքարեր, բազալտներ, անդեզիտաբազալտներ: Տարածքում շատ թույլ է արտահայտված նորագույն հրաբխականությունը. կա չորրորդականի /850-10 հազ տարի/ երկու փոքր հրաբխային կենտրոններ, որոնք արտավիժել են բազալտներ, բազանիտներ, դացիտներ:

Մյունիքի հայտնի գունավոր մետաղների հանքավայրերի մեծ մասը հիդրոթերմալ բնույթի են, հանքաբերությունն ունի հիմնականում պղինձ-մոլիբդենային և ոսկեբեր հանքայնացման բնույթ, ուղեկից մետաղներն են կապարը, ցինկը, արծաթը, հաղվադեպ հողերը:


Զգալի է նաև լիթոլոգիական գործոնը, որը կապված է ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունների և քիմիական կազմի հետ: Այսպես, պղինձ-մոլիբդենային հանքայնացումը հիմնականում կուտակվել է մոնցոնիտային կազմի ջարդրտված ինտրուզիվ ապարներում, որոնցում գունավոր մետաղներ պարունակող միներալները տարալուծվել և տեղակալվել են սուլֆիդներով:

Հանքավայրերի տարածական կապվածությունը Տաշտունի և Շիշկերտ-Գիրաթադի ռեգիոնալ խզումնային գոտիների հետ, դրանց տեղադրումը տեկտոնական բլոկներում, որոնք առաջացել են ռեգիոնալ խզումների և ճյուղավորվող ավելի ցածր կարգի տեկտոնական խզումնային ստրուկտուրաների միջև, թույլ է տալիս միանշանակ լուծել ռեգիոնալ խախտումների դերի հարցը հանքայնացման տեղաբաշխման առումով:

Դրանք հանդիսանում են հանքավերահսկող կառուցվածքներ, և դրանց դերը ամենայն հավանականությամբ, կայանում է նրանում, որ փոխհատվող ստրուկտուրաների միջև ձևավորել են ջարդրտման գոտիներ և բլոկներ, որոնք հետագայում բարենպաստ պայմաններ են դարձել հանքայնացման կուտակման համար:



Նկար 2. Ռեկտեֆի թեքություններ




Նկար 3. Երկրաձևաբանություն



▪ **Սեյսմիկ պայմանների բնութագիր**

Սյունիքի մարզի տեկտոնական բնութագրի հիմնականում որոշվում է Փամբակ-Սևան-Սյունիք խորքային խզվածքի ազդեցությամբ: Այս խորքային խզվածքը Սևանա լճի հյուսիսային ափերից ճյուղավորվում և Վարդենիսի շրջակայքից սկսած՝ 75 կմ հեռավորությամբ անցնում է հիմնական խզվածքին զուգահեռ, առաջացնելով Աքերայի խզվածքը: Բացի այս հիմնական խզվածքները շրջանում առանձնացվում են մի քանի տեկտոնական-կառուցվածքային միավորներ՝ Շիշկերտ-Գիրաթաղի վրաշարժ, Տաշտունի (Դեբակլիի) վարնետք, Արամազդ-Շիշկերտի սինկլինալ, Շվանիձորի անտիկլինալ, Բաղասարի սինկլինալ և Մեղրու գրաբեն: Տեկտոնական այս խզումներից ամենախոշորներն են Շիշկերտ-Գիրաթաղի և Տաշտունի խորքային խզումները, որոնք հանդիսանում են հանքավերահսկող և հանքաներփակող կառույցներ:

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված "ՀՀՇՆ 20.04- "Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր": Այդ նորմերով սահմանվում են այն չափանիշները, որոնք պետք է դրվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում /սեյսմակայունության հիմնական սկզբունքներ/: Սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար 300, 400 և 500 սմ/վրկ<sup>2</sup> է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Հայցվող տարածքը գտնվում են 2-րդ սեյսմիկ գոտում և դրան վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում  $a = 0.4g$  /գրունտային ստվարաշերտի վերին մակերևույթի վրա երկրաշարժի ժամանակ առաջացած արագացման մեծությունը հորիզոնական ուղղությամբ/:




**Նկար 4.** Հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի 12.02.2013թ N 100-Ն հրամանով սահմանվում է սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կազմակերպման և իրականացման դրույթները, համաձայն որոնց կազմվում են սեյսմիկ ռիսկի գնահատման քրտեզներ, որոնք դրվում են մարզերի և համայնքների զարգացման ծրագրերի,

քաղաքաշինական փաստաթղթերի մշակման հիմքում և կիրառվում են տարածքների, շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության նվազեցման միջոցառումների պլանավորման, արտակարգ իրավիճակների կառավարման և նրանց հետևանքների վերացման համար:

▪ **Սողանքներ**

Սողանքային մարմիններ բուն երևակման տարածքի մոտակայքում չեն արձանագրվել: Հեռավորությունը մինչև մոտակա հայտնի սողանքային մարմինները կազմում է մոտ 1-1,5կմ:



Նկար 5. Սողանքներ

▪ **Շրջանի կլիման**

Հայաստանի աշխարհագրական դիրքը, նրա ծովի մակարդակից բավականին բարձր և ծովերից ու օվկիանոսներից հեռու գտնվելը, տեղանքի բարդ, խիստ մասնատված ռելիեֆը և այլ առանձնահատկությունները պայմանավորում են հանրապետության *բնակլիմայական պայմանների* մեծ բազմազանությունը, որոնցից գլխավոր գործոններն են հանդիսանում.

ա/առանձին ֆիզիկաաշխարհագրական շրջանների միջև բարձրության նիշերի մեծ տատանումները,

բ/*արեգակնային ճառագայթման* բարձր ինտենսիվությունը,

բ/ կլիմայի խիստ ցամաքայնությունը (օդի ջերմաստիճանի օրական և տարեկան մեծ տատանումները), տարածքի լեռնահովտային շրջանառության առանձնահատկությունները և խիստ արտահայտված *ուղղաձիգ գոտիականությունը*:

ՀՀ-ն գտնվում է մերձարևադարձային գոտու հյուսիսային լայնություններում և բնութագրվում է չոր ցամաքային կլիմայով ու կլիմայական հակադրություններով: ՀՀ կլիմայի վրա մեծ է հարակից տարածքների՝ Մեծ Կովկասի, Իրանական ու Փոքրասիական

բարձրավանդակների, արաբական անապատների, Սև և Կասպից ծովերի ազդեցությունը: ՀՀ տարածքին բնորոշ է արևոտ կլիման: Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ կեսօրին 27<sup>0</sup>-ից (դեկտեմբեր) մինչև 74<sup>0</sup> է (հունիս), ցերեկվա տևողությունը՝ համապատասխանաբար՝ 9 ժամ 17 րոպեից մինչև 15 ժամ 3 րոպե: *Արեգակի տարեկան ճառագայթային հաշվեկշիռը* դրական է և տատանվում է 40–70 կկալ/սմ<sup>2</sup> սահմաններում: *Արևափայլքի տարեկան միջին տևողությունը* տատանվում է 1930 ժամից (Իջևան) 2780 ժամի (Մարտունի) սահմաններում: Տարվա ընթացքում առավելագույն անարև օրեր (64 օր) դիտվում են Իջևանում, նվազագույնը (19 օր)՝ Սևանի թերակղզում:

ՀՀ-ում տարվա ընթացքում տիրապետում են մերձարևադարձային գոտուն բնորոշ արևմտյան օդային հոսանքները, որոնք լեռնային ռելիեֆի պայմաններում փոխում են իրենց բնույթը և պայմանավորում քամիների բազմազանությունն ու ռեժիմը: Ըստ բարձրության՝ մեծանում է քամու արագությունը: Բարձրլեռնային գոտում ու լեռնանցքներում ձմռանը քամու արագությունը 6–9 մ/վ է, փակ գոգավորություններում՝ 1 մ/վ: Ռելիեֆի անհավասարաչափ տաքացման հետևանքով, առավելապես ամռանը, առաջանում են *լեռնահովտային քամիներ*: Ամենաբարձր *տարեկան միջին ջերմաստիճանը* (13,8<sup>0</sup>C) դիտվում է Մեղրիում, ամենացածրը (–2,7<sup>0</sup>C)՝ Արագածում (բարձրլեռնային կայան): Ամենացուրտ ամիսը հունվարն է (նվազագույն ջերմաստիճանը՝ –46<sup>0</sup>C, Շիրակի մարզ, Պաղակն), ամենատաքը՝ հուլիսն ու օգոստոսը (առավելագույն ջերմաստիճանը՝ 42<sup>0</sup>C, Արարատյան դաշտ):

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության:

Ուսումնասիրության համար հայցվող տարածքի տարածաշրջանի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թ. հունվարի 15-ի N03-Ն հրամանով հաստատված „Շինարարական կլիմայաբանություն,, ՀՀՇՆ 22-01-2024 փաստաթղթից: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ:

Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (25-30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2020թ. ներառյալ) տվյալների հաշվառումով: Կլիմայի, մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանի, օդի հարաբերական խոնավության, արևափայլի տևողության, անարև օրերի և մթնոլորտային տեղումների ու ձյունածածկույթի պարամետրերի բնորոշման համար հիմք է վերցրվել տարածքին մոտ գտնվող Կապանի և Քաջարանի օդերևութաբանական կայանների դիտարկումների արդյունքները:

Շրջանը ընդգրկում է երեք կլիմայական գոտի՝ ցուրտ, չափավոր և տաք: Կապանի հարավ – արևելյան ցածրադիր տարածքներին բնորոշ է “տաք” կլիմայական տիպը, որը ձևավորվում է ՀՀ հյուսիսարևելյան և հարավարևելյան շրջաններում՝ մինչև 1200 մ ծ.մ. բարձրություններում /Կապան, Գեղանուշ, Ճակատեն/: „Տաք”, կլիմայական գոտում ամառը շոգ է ու չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21°C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ ձմռանը՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0°C-ց մինչև մինուս 5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0-3,0 մ/վրկ:

Ձմռան ամիսներին բնորոշ է կայուն ձնեծածկույթը: Տեղումների միջին տարեկան քանակությունը՝ մոտավորապես 500 մմ, թեև հնարավոր են նաև հեղեղներ՝ ամռան ամիսներին օրական 50-90 մմ: Տեղումների հիմնական մասը լինում է մարտից մինչև հուլիս ամիսը ներառյալ: Տարվա ամենաշոգ ամիսը օգոստոսն է /առավելագույն ջերմաստիճանը՝ 37-42 C°, օդի նվազագույն հարաբերական խոնավությունը 33 %/, ամենացուրտ ամիսը՝ հունվարը /նվազագույն ջերմաստիճանը՝ 17-21 C°/:


Ձմեռը կարճատև է, մեղմ, անկայուն ձյունածածկույթով, տարեկան տեղումները՝ 350 մմ-ի սահմաններում: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը 1° C-ից մինուս 1° C է, նվազագույնը՝ մինուս 25°C: Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը 24-26°C է, առավելագույնը՝ 41°C: Անսառնամանիք ժամանակաշրջանը՝ 230-250 օր:

“Չափավոր” կլիմայական գոտին գտնվում է 1200-1600 մ ծ. մ. բարձրություններում՝ նախալեռնային շրջաններում: Ամառ՝ տաք, խոնավ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C-ից մինչև 20°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, բարենպաստ քամիներ, միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ: Ձմեռ՝ չափավոր ցուրտ է, թույլ քամիներով և օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հունվարին 0°C-ից մինչև մինուս 5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 50-70%, քամու միջին արագությունը՝ 3.0-5.0 մ/վ:

„Ցուրտ”, կլիմայական գոտին ձևավորվում է 1600 մ ծ. մ. –ից ավելի բարձր սահմաններում՝ լեռնային շրջաններում:

Ամառ՝ զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ: Ձմեռ՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի:

Ստորև ներկայացված աղյուսակներով ներկայացվում է տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները՝ մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը, օդի հարաբերական խոնավությունը, մթնոլորտային տեղումները և ձյունածածկը, որոնք պետք է հաշվառվեն ներդրումային գործընթացի բոլոր փուլերում՝ շինարարական համալիրի օբյեկտների հետազննության, նախագծման, շինարարության, և շահագործման ընթացքում:



Նկար 6.

**Աղյուսակ 3.3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Կապան օդերևութաբանական կայանի տվյալներով**

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
Կապան	705	0.8	2.4	5.9	11.5	16.3	20.6	23.7	23.1	18.9	13.1	7.3	2.6	12.2	22.1	-	42.4

**Աղյուսակ 3.3.2. Օդի հարաբերական խոնավությունը Կապան օդերևութաբանական կայանի տվյալներով**

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Կապան	705	75	75	75	73	74	67	62	63	72	78	78	77	73	53	44

**Աղյուսակ 3.3.3. Մթնոլորտային տեղումները Կապան օդերևութաբանական կայանի տվյալներով**

Բնակավայրի անվանումը	Տեղումների Քանակը միջին ամսական /օրական առավելագույն, մմ												Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	Ըստ ամիսների											տարեկան			
Կապան	27	32	63	72	98	64	31	27	39	46	41	26	566	189	377
	30	40	58	76	99	70	176	70	55	51	63	33	176		

Աղյուսակ 3.3.4. Քամի

Բնակավայրը	Մթնոլորտային ճնշումը ԳՊԱ	Տարվա ամիսը	Քամու ուղղությունների կրկնելիությունը %								Անդորի կրկնելիությունը %	Միջին ամսական արագությունը մ/վրկ	Գերակշռող ուղղությունը հունիս օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
			ըստ ուղղությունների													
			հս.	հս. արևելյան	արևելյան	հվ. արևելյան	հվ.	հվ. արևմտյան	արևմտյան	հս. արևմտյան						
Կապան	935.7	I	2/2.2	2/2.0	29/2.3	30/2.0	6/1.9	5/1.6	18/2.2	8/1.9	45	1,0	Հվ Արլ	2,4	Արլ	2,3
		IV	2/2,5	1/2,0	37/2.9	32/2.5	4/2.3	3/1.9	12/2.7	9/2.0	36	1.5				
		VII	2/2.2	2/1.9	31/2.7	34/2.4	6/1.9	3/1.6	11/2.0	11/1.6	39	1,2				
		X	1/2,1	1/1.7	34/2.5	32/2.2	6/1.9	4/1.6	12/2.0	10/1.3	44	1.1				

**Աղյուսակ 3.3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Քաջարան օդերևութաբանական կայանի տվյալներով**

	Քարծրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Քացարձակ նվազագույն	Քացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Քաջարան	1843	-3.0	-2.7	0.8	6.3	10.4	14.6	17.2	16.9	13.6	8.3	2.8	-1.4	7.0	-24.0	35.0

**Աղյուսակ 3.3.2. Օդի հարաբերական խոնավությունը Քաջարան օդերևութաբանական կայանի տվյալներով**

	Քարծրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Քաջարան	1843	68	70	71	69	71	66	61	63	68	71	70	68	68	63	54

**Աղյուսակ 3.3.3. Մթնոլորտային տեղումները Քաջարան օդերևութաբանական կայանի տվյալներով**

Բնակավայրի անվանումը	Տեղումների Քանակը միջին ամսական /օրական առավելագույն, մմ												Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	Ըստ ամիսների											տարեկան			
Քաջարան	48	55	74	79	85	48	22	19	29	52	53	44	608	274	334
	54	35	62	53	37	37	27	65	35	38	52	36	65		



Աղյուսակ 3.3.4. Քամիներ.

1	2	3	4								12	13	14	15	16	17
			5	6	7	8	9	10	11							
Քաջարան	817.5	հունվար	5	1	13	27	6	9	19	20	58	1,2	Գերա- կշռող ուղղությունը հունիս գոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
			2.7	3.0	1,9	2,2	2,5	3.1	3.6	4.1						
		ապրիլ	4	1	17	42	6	6	11	13	50	1,3				
			2,5	2,5	2,1	2,2	2,0	2,7	3,3	3,2						
		հունիս	2	1	28	56	3	1	2	7	49	1,3				
			1,7	1,6	2,4	2,8	2,0	1,9	1,9	1,9						
		հոկտեմբեր	3	1	23	39	4	6	13	11	60	1.0				
			2,6	2,5	1,9	2,4	2,0	2,6	3,1	2,9						

### 3.6. Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:


Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ (ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N 160-Ն որոշում)


Վնասակար նյութի անվանումը	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>		Վտանգավորության դաս
	Միջին օրական	առավելագույն միանվագ	
Ածխածնի օքսիդ	3	5	4
Ազոտի երկօքսիդ	0.04	0.2	2
Ազոտի օքսիդ	0.06	0.4	3
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.5	3
Փոշի	0.15	0.5	3
Գետնամերձ օզոն	0.03	0.16	1
Նիկել	0.001	-	2
Մոլիբդեն	0.02	0.24	-
Կոբալտ	0.001	-	1

Հաշվի առնելով հայցվող տարածքի մոտավոր հավասար հեռավորությունը Կապան և Քաջարան քաղաքներից /10-12կմ/ ստորև բերվում են 2 քաղաքների մթնոլորտային օդի վերաբերյալ տվյալները:


Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:


Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:





Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Կապան քաղաքում գործում է 11 շարժական դիտակետ:






**Մթնոլորտային օդի որակի 2024 թվականի մայիս ամսվա մոնիթորինգի տվյալները տրված են ստորև.**


Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2024 թվականի մայիս ամսվա դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան, և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ:

Փոշու մայիս ամսվա միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն Արարատ քաղաքում՝ 1,1-ական անգամ, իսկ Գյումրի քաղաքում՝ աննշան: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:

Ծծմբի երկօքսիդի մայիս ամսվա միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:





Ազոտի երկօքսիդի մայիս ամսվա միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹ-Կ-ն: Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղ-բյուրն ավտոտրանսպորտն է:





### Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Կապան քաղաքում գործում է 11 շարժական դիտակետ:



### Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաջարան քաղաքում գործում է 15 շարժական դիտակետ:



Հայցվող տարածքում դիտակետեր կամ պասիվ նմուշարկման կետեր չկան և այստեղ օդի փաստացի որակի մասին տեղեկություններ չկան: Վերլուծելով գոյություն ունեցող իրավիճակը, Քաջարան և Կապան քաղաքների պասիվ նմուշառիչներով օդային ավազանի դիտարկումների վերը բերված տվյալները, տեղամասերի բնակավայրերից հեռու գտնվելը, կարելի է ենթադրել, որ օդային ավազանը աղտոտված չէ: Համաձայն «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի՝ կարելի է ընդունել տարածքի օդի ֆոնային աղտոտվածության հետևյալ ցուցանիշները. փոշի՝ 0,071 մգ/մ<sup>3</sup>, ածխածնի օքսիդ՝ 0,8 մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ՝ 0,023 մգ/մ<sup>3</sup>, ծծմբի երկօքսիդ՝ 0,006 մգ/մ<sup>3</sup>:

### 3.7 Ջրային ռեսուրսներ

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս):

Ողջի գետի ջրերի որակի մոնիթորինգը իրականացվում է 4 դիտակետերով:

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
91	Ողջի	Հարավային	Սյունիք	1.7 կմ ք. Քաջարանից վերև
92	Ողջի	Հարավային	Սյունիք	1.8 կմ ք. Քաջարանից ներքև

93	Ողջի	Հարավային	Սյունիք	0.8 կմ ք. Կապանից վերև
94	Ողջի	Հարավային	Սյունիք	0.5 կմ Կապանի օդանավակայանից ներքև

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձևաչափի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:

**Հարավային ջրավազանային կառավարման տարածք**

Հիդրոլոգիական դիտարկումներ Հարավային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 9 դիտակետում:

Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Աղյուսակ 13. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Մթնոլորտային անոտային էլքեր, մՅ/վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	եռում	%	փաստացի	եռում	%	փաստացի	եռում	%
Մեղրիգետ	Մեղրի	1.21	0.91	133	1.75	1.03	170	3.45	2.06	167
Ողջի	Կապան	0.91	1.45	63	1.06	1.83	58	2.09	1.74	44
Որոտան	Գորայք	1.67	2.00	84	1.67	2.01	83	1.73	2.17	80

**Մակերևութային ջրերի որակ 2024թ. օգոստոսին**

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև «վատ» «անբավարար» (4-րդ դաս) և գետաբերանի հատվածներում գնահատվել է «անբավարար» (5-րդ դաս):

Գեղի գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է լավ (2-րդ դաս):

Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սիսիան քաղաքից վերև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Սիսիան քաղաքից ներքև ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ողջի գետը՝ Լեռնաձոր գյուղից ներքև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հանքարդյունաբերության գործունեության հետևանքով ծանր մետաղներով հատկապես աղտոտվում է Կապան քաղաքի օդանավակայանից ներքև հատվածում, որտեղ ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ատորև բերվում են Ողջի գետի բազմամյա միջև տարեկան հոսքի բնութագրերը, միջին տարեկան առավելագույն և նվազագույն ծախսերը:

Գետը	Ծախսը, մ <sup>3</sup> /վ	Տարեկան հոսքը, մլն.մ3	Հոսքի մոդուլը, լ/վ կմ2	Հոսքի շերտի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
------	--------------------------	-----------------------	------------------------	-------------------------------	-----------------

Գետը	Միջին տարեկան ծախսը, մ3/վ		Առավելագույն ծախսը, մ3/վ		Նվազագույն ծախսը, մ3/վ
Ողջի	9.6		-		2.96
Ողջի	9.6	303	14.5	457	0.55


**ՈՂՋԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՆԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ**



Նկար 7.



ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը (մարտ / 2024 թվական)



Նկար 8.

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման նպատակով հայցվող տարածքի հարավ-արևմտյան կողմով, 32-36մ հեռավորությամբ հոսում է Ողջի գետի ձախ վտակ Գիրաթաղ գետակը, որը սկիզբ է առնում Բարգուշատի լեռների Թառակատար գագաթի արևելյան լանջերից և Ներքին Գիրաթաղ գյուղից ցած, Կապան քաղաքից մոտ 18 կմ հյուսիս-արևմուտք, ձախից միախառնվում Ողջի գետին պատմական Բաղաբերդի ավերակների մոտ: Երկարությունը՝ 11 կմ:

Հանքերևակման մոտակայքում բնական աղբյուրների ելքեր չկան, իսկ ստորգետնյա ջրերի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով նախատեսված են հիդրոերկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով:

### 3.8. Հողեր


Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- մետաղաձուլական գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը և այլն:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը անցնում է ջրային միջավայր, մի մասը կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանները, մետաղական հանքարդյունաբերությունը և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտման աղբյուրները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով:

2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Գեղարքունիկ, Տավուշ, Կոտայք, Արարատ, Սյունիք, Շիրակ և Արմավիրի մարզերում:

Մարզերի և քաղաքների հողերում մետաղների կոնցենտրացիաները բերված են ստորև գծապատկերներում, իսկ կոնցենտրացիաների համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցման վերաբերյալ տեղեկատվությունը աղյուսակում :



Մարզ/ Քաղաք	Վանադիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կադմի
Փերագանգումը համապատասխան ՄԹԿ-ից, անգամ							
Տավուշ	1.3	14.7-35.0	5.9-8.4	7.3-16.2	8.0-10.3	4.0-19.5	-
Կոտայք	1.5-2.0	17.0-46.3	5.1-12.7	4.3-26.7	9.3-28	2.5-10	1.3-2.1
Արարատ	1.2	11.0-14.7	2.9-4.3	8.0-11.3	18.8-17.5	3.5-6.5	-
Վայոց ձոր	1.5-2.9	25.0-74.7	3.5-6.7	1.7-15.3	4.8-13.8	3.5-6.5	1.1-1.4
Լոռի	1.3-7.1	16.4-1760.3	2.6-55.9	1.7-16.2	2.9-19.3	2.5-37.9	1.1-27.6
Գյումրի	1.4-2.4	15.6-24.3	5.4-23.0	1.7-14.3	8.5-18.3	2.5-5	1.2-1.6
Վարդենիս	1.1-2.0	18.0-24.7	5.3-8.9	19.0-42.0	24.3-42	5.5-8.0	1.2-1.3
Մեծամոր	1.5	16.7	6.1	21.8	24.3	7.0	-
Արմավիր	1.1-2.5	20.7-28.7	6.8-9.7	14.2-65.2	32.5-41	4.0-6.5	1.4-2.4
Կատան	1.1-2.2	107.7-213.3	7.7-23.7	1.7-15.7	9.3-17	6.5-12	1.5-10.7
Քաղաքան	1.5-1.6	230.3-966.0	6.3-18.5	1.7-7.0	7.0-7.3	10.0-11.5	1.6
Մեղրի	3.2	70.7	5.9	1.7	7.8	7.0	-
Ազարակ	1.8-2.7	140.3-220.3	5.1-11.0	1.7-8.8	4.8-10.5	3.0-5.0	1.3-1.4

Բուն հայցվող տարածքի հողերի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվություն չկա, քանի որ տարածքում երբևէ այդ մասով ուսումնասիրություններ չեն կատարվել: Ուսումնասիրության ընթացքում կիրականացվեն ՇՄԱԳ հաշվետվությունով նախատեսված՝ տեղամասերի հողերի մոնիտորինգ լաբորատոր ուսումնասիրություններով, ինչի արդյունքում կստեղծվեն հողերի աղտոտվածության վերաբերյալ ելակետային տվյալներ:

Ուսումնասիրության տարածքի շրջակայքում տարածված են անտառային դարչնագույն հողերը: Հայաստանի հանրապետությունում անտառային դարչնագույն հողեր կազմում են տարածքի 21,6 %-ը (564 հազար հա), զբաղեցնում են Լավար-Լեջանի, Իջևանի, Գուգարաց, Բագումի, Փամբակի և Զանգեզուրի լեռնաշղթաների, Արցախի արևելյան լանջերի 900- 2400 մ բարձրությունները, հանդիպում են նաև տարբեր մասնատվածությամբ լեռնալանջերում և փոքրաթեք սարավանդներում: Գտնվում են չափավոր տաք, փոփոխական խոնավությամբ կլիմայական ու չոր ծառափոխուտատեսակներով հարուստ անտառածածկոցի պայմաններում: Անտառային դարչնագույն հողերը բնորոշվում են կավայնացմամբ, զգալի քարքարոտությամբ, կավավազային մեխանիկական կազմով:

- Հումուսի պարունակությունը 4-6 % է
- ունեն չեզոք կամ թույլ հիմնային (pH=7-8,2) ռեակցիա
- միջին և միջինից բարձր կլանունակություն (30- 44 մգ/Ա/վ)
- կարբոնատների զգալի պարունակություն

Այդ հողերի 46,4 %-ը տարբեր աստիճանների տափաստանացված է, որից 27%-ն օգտագործվում է որպես վարելահող, խոտհարք և արոտավայր:

Զանգեզուրի լեռնաշղթայում այս հողատիպը հանդիպում է 500-1700մ ծ.մ. բարձրությունների վրա, իսկ հարավային լանջերում՝ մինչև 2400մ ծ.մ: Այս հողերում հողագոյացնող ապարների քայքայված կառուցվածքները հիմնականում ներկայացված են հողմնահարված կարբոնատային և բարձր-հիմնային ավազակավով, հազվադեպ՝ կավով, որոնց հզորությունը կարող է հասնել 1,5-2 մ: Տաք, մեղմ և փոփոխական-խոնավ կլիման, հողառաջացման ակտիվ շրջանի մեծ տևողությունը, բավարար ներքին դրենաժային համակարգի առկայությունը և ներհողային հոսքերի ուղղությունների սեզոնային փոփոխությունը, նպաստում են առաջնային միներալների խորը և ինտենսիվ հողմնահարմանը, երկրորդային հանքային նութերի առաջացմանը, ինչպես նաև բավականին հզոր կավայնացված հողերի ձևավորմանը:

Շրջանի լեռնային դարչնագույն անտառային հողերին բնորոշ է գենետիկական հորիզոնների տարբերակումը, հումուսակուտակիչ հորիզոնի դարչնագույն երանգը, վերին հորիզոնի փոքր գնդիկա-հատիկային կառուցվածքը, միջին հորիզոնների ավելի խոշոր հատիկային կառուցվածքը և կավայնացումը, կավային և ավազակավային մեխանիկական կազմը, միջին հումուսայնությունը, բարձր կլանողականությունը:

Լեռնային դարչնագույն անտառային հողերի մեջ տարբերում են կրազերծված, տիպիկ և կարբոնատային ենթատիպեր, որոնք ևս իրենց հերթին կարող են ունենալ տարատեսակներ: Տիպիկ ենթատեսակի հողերը իրենց հատկություններով զբաղեցնում են միջանկյալ դիրք կրազերծված և կարբոնատային ենթատիպերի միջև: Կրազերծված ենթատիպը տարբերվում է կարբոնատային մետամորֆիկ հորիզոնով և քիչ արտահայտված կավայնությամբ: Կարբոնատային հողերի հումուսային հորիզոնը և հումուսի պարունակությունը ավելի փոքր են, միջավայրի ռեակցիան՝ հիմնային (pH -7,4-8,5):

Լեռնային դարչնագույն անտառային հողերի ենթատիպերում տարբերվում են կավային, խճաքարային, նստվածքա-կարբոնատային, ոչ լրիվ ձևավորված տեսակներ:


Շրջանում հանդիպող լեռնային դարչնագույն անտառային հողերի բնութագիրը. կրազերծված՝ թույլ հզորությամբ; միջին էրոզիացված; կավային, ավազակավային կամ խճաքարային; հանդիպում են տափաստանեցված և մշակվող ենթատեսակները:

տիպիկ՝ տափաստանեցված; թույլ, տեղ-տեղ միջին հզորությամբ; հիմնականում միջին էրոզիացված; կավային, ավազակավային; հանդիպում են մշակվող ենթատեսակները:

կարբոնատային՝ տափաստանեցված; թույլ հզորությամբ; ավազակավային; ուժեղ էրոզիացված; հանդիպում է ոչ լրիվ ձևավորված ենթատեսակը: Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով:

Դարչնագույն լվացված անտառային հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուսը, %	Co <sub>2</sub> , %	Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
1	2	3	4	5	6
Լվացված դարչնագույն անտառային	0-10	14.1	չկա	40.3	6.6
	10-26	3.7	ճկա	39.1	6.7
	26-49	2.2	չկա	33.4	6.5
	49-64	1.4	չկա	38.6	6.8
	64-85	1.14	չկա	37.6	7.7
	85-107	0.8	չկա	38, 9	7.3
1	2	3	4	5	6
Կարբոնատային դարչնագույն անտառային	2-16	10.8	1.9	22.8	7.8
	16-31	4.5	5.2	15.6	8.0
	31-43	2.5	7.5	17.0	7.5
	43-120	1.2	8.9	19.8	7.9




Նկար 9. Հողային տիպեր

Ներքին Գիրաթադի մարմարացված կրաքարերի հանքերակման 1-ին և 2-րդ տեղամասերը գտնվում են Քաջարան համայնքի Լեռնաձոր գյուղի վարչական սահմաններում, հայցվող տարածքները նպատակային նշանակությամբ գյուղատնտեսական, գործառնական նշանակությամբ այլ հողեր են՝ 1-ին տեղամասը /3.23հա մակերեսով/ 09-038-0228-0001, 2-րդ տեղամասը /6.60հա/ 09-038-0226-0001 կադաստրային ծածկագրերով: 2-րդ տեղամասի մեջ ներառվում է նաև 11մx11մ=121մ<sup>2</sup> մակերեսով էներգետիկայի գործառնական նշանակության 0226-0008 կադաստրային ծածկագրով հող որի վրա տեղադրվել է կառուցվող Իրան-Հայաստան 400ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի հենասյուն: Ստացվել է, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման վերաբերյալ Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ի "Տաթն" մասնաճյուղի և ՀՀ ՏԿԵՆ "Բարձրավոլտ էլեկտրացանցեր" ՓԲԸ-ի կարծիքները /կցվում են տես էջ 88,89/

Լրամշակման ժամանակ 1-ին տեղամասի տարածքը կրճատվել է 0.87հա-ով որի արդյունքում տարածքից դուրս են թողնվել և ջրային հաղերը:

▪ **Բուսական և կենդանական աշխարհ**

Ուսումնասիրության համար հայցվող տարածքը ամբողջովին գտնվում է Ջանգեզուրի ֆլորիստիկ շրջանում (Թախտաջյան, 1954; Թամանյան, Ֆայվուշ, 2010): Ֆլորիստիկ շրջանի բարձրունքային սահմաններն են 600- 3900 մ ծ. մ: Բուսական համակեցությունների հիմնական տիպերն են կիսանապատային, անտառային, տափաստանային, մարգագետնային և նոսրանտառային: Բուսական աշխարհը ՀՀ մյուս ֆլորիստիկ շրջանների համեմատ ամենաբազմազանն է՝ 2000 բուսատեսակ:



Նկար 10. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)



- |   |  |
|---|--|
| <p><b>Մարզագիտական բուսականություն</b></p> <p>1 Բարձրադրված տաքսիդոս-հացազգա-լոշիսային (գորգեր) մասնակցությամբ՝ <i>Campansula tridentata</i> Schreb., <i>Carex tristis</i> Bieb., <i>Taraxacum stevenii</i> DC., <i>Plantago saxatilis</i> Bieb., <i>Colpodium araraticum</i> Tarutv., <i>Poa alpina</i> L., <i>Carum caucasicum</i> (Bieb.) Boiss., <i>Nardus glabriculmis</i> Sakalo, <i>Sibbaldia parviflora</i> Willd.</p> <p>2 Տաքսիդոս (ներառյալ) հացազգիների և տաքսիդոս-հացազգային, մասնակցությամբ՝ <i>Bromopsis variegata</i> (Bieb.) Holub, <i>Hordium violaceum</i> Boiss. et Huet, <i>Auromonastrium fasciculatum</i> (L.) Holub, <i>Betonica macrantha</i> C. Koch, <i>Veronica Gentiana</i>, <i>Cephalaria</i>, <i>Impatiens</i>, <i>Myosotis</i> ցեղի տեսակների հետ համառոտ</p> <p><b>Անտառային բուսականություն</b></p> <p>4 Լայնադաշտ, մասնակցությամբ՝ <i>Fagus orientalis</i> Lipsky կայուն (<i>Quercus ibérica</i> Stev. Q. <i>macranthera</i> Fisch. et Mey. ex Hohen), րիլու (<i>Carpinus betulus</i> L., <i>C. orientalis</i> Mill), հազնո (<i>Fraxinus excelsior</i> L.), րիլնո (<i>Tilia begoniifolia</i> Stev.).</p> | <p><b>Քանդակի նոսրանկատային բուսականություն</b></p> <p>7 Գինո խաղ, մասնակցությամբ՝ <i>Juniperus polycarpus</i> C. Koch, <i>J. oblonga</i> Bieb., <i>J. hemisphaerica</i> J. et C. presl., <i>J. foetidissima</i> Willd., <i>J. Sabina</i> L., <i>Ephedra procera</i> Fisch. et Mey.</p> <p>8 Սաղարթավոր խաղ, մասնակցությամբ՝ <i>Paliurus spina-christi</i> Mill., <i>Sprucea crenata</i> L., <i>Amugdalis fenzliana</i> (Fritsch) Lipsky, <i>Pistacia natica</i> Fisch. et Mey., <i>Celtis glabrata</i> Stev. ex Planch., <i>Cercasus incana</i> (Pall.) Spach, <i>Pyrus salicifolia</i> Pall.</p> <p><b>Լեռնարհերոֆի բուսականություն</b></p> <p>10 Ֆրիզանդի րիլնո մասնակցությամբ՝ <i>Amugdalis fenzliana</i> (Fritsch) Lipsky, <i>Cercasus incana</i> (Pall.) Spach, <i>Rhamnus psilastis</i> Fisch. et Mey., <i>Celtis glabrata</i> Stev. ex Planch. տեսակներ մասնակցությամբ՝ <i>Astragalus</i>, <i>Acantholimon</i>, <i>Acanthophyllum</i>, <i>Onobrychis cornuta</i> (L.) Desv., <i>Salvia dracocephaloides</i> Boiss., <i>Thymus kotschyanus</i> Boiss. et Hohen.</p> |
|---|--|

Նկար 11. Բնական բուսածածկի տիպեր

Բուսականության տարածումը հիմնականում պայմանավորված է բարձունքային գոտիականությամբ, սակայն բնական գոտիների վերին և ստորին սահմանները տատանումներ են տալիս, երբեմն բուսականության մի գոտիական տիպը թափանցում է մյուսի ոլորտը, ինչը պայմանավորված է ռելիեֆի, միկրոկլիմայական, հողային, ջրաբանական և այլ առանձնահատկություններով: Չափազանց հետաքրքիր և հազվագյուտ տեսակներով հարուստ այս ֆլորիստիկ շրջանում հանդիպում են այսպես կոչված խայտաբղետածաղկավոր – տարախոտային տափաստանային բուսականությունը,

անտառային բուսական համակեցությունները, նոսրանտառները և կիսանապատները, որոնք գտնվում են Կապանից հարավ – արևելք:

Շրջանն աչքի է ընկնում իր հարուստ ծառա-թփային բուսականությամբ՝ 190 տեսակներ: Տարաբաժաշրջանի անտառները լեռնային են, ունեն հիմնականում ջրակարգավորիչ, հակաերոզիոն և միջավայրապաշտպան նշանակություն: Անտառածածկ տարածքների միջին լրիվությունը կազմում է 0,42: Անտառները հիմնականում տեղաբաշխված են բարձր թեքությունների վրա:

Չանգեզուրի ֆլորիստական շրջանի անտառածածկում գերակշռում են կաղնու, բոխու և խառը անտառները: 750-ից 1200 մ բարձրություններում տարածված են արաքսյան կաղնու (*Quercus araxina*), 1200-ից 1500 մ վրա վրացական կաղնու (*Quercus iberica*), 1400-2500 մ վրա արևելյան կաղնու համակեցությունները, 2700մ-ից բարձր տիրապետում են մերձալպյան մարգագետինները: Գիհու նոսր անտառները զբաղեցնում են հարավային դիրքադրության քարքարոտ լեռնալանջերը, տարածված են հիմնականում թույլ հզորության հողերի վրա՝ 500-2000 մ բարձրություններում: Բոխու, սոճու, հունական ընկուզենու, խնձորենու և այլ ծառատեսակները զբաղեցնում են տարածքի չնչին մասը:

Մաքուր բոխուտային անտառները սովորական են հյուսիսային լանջերի վրա՝ շագանակագույն և բաց շագանակագույն անտառային հողերի վրա: Բոխուն ուղեկցող տեսակներից են հացենի սրապտուղը, թեղի մերկը և բոխատերևը, դաշտային և վրացական թխկին, սովորական արոսենին, տանձենու մի քանի տեսակներ, ինչպես նաև կաղնին: Խիտ անտառներում խոտածածկը զարգացած է շատ թույլ: Բացատներում հազվադեպ հանդիպում են գերմանական զկեռենին, բոնչին, գերիմաստը, սովորական գայլահատը: Բնական վերածը անբավարար է հիմնականում գիհու և կաղնու չոր տիպի անտառներում, բավարար վերած նկատվում է բոխու երիտասարդ անտառներում:

Անտառային գոտուց վեր, սկսած 2200 մ բարձրությունից, տարածվում է բարձր լեռնային ենթալպյան մարգագետնային բուսականությունը: Նոսրանտառներում գիհու հետ տարածված են եղջյուրավոր կորնգանը և ոզնաթուփը: Տարածքի ամենաբարձր հատվածներում ոչ մեծ հատվածներով ներկայացված են նաև ալպիական մարգագետինները, որտեղ գերակշռում են գայլաթաթի և մատնունիի տարբեր տեսակներ, ինչպես նաև բարակտոնուկ կովկասյանը և շյուղախոտ փայլունը:

Անտառածածկ տարածքներում շատ են նաև վայրի պտուղները՝ հունական ընկուզենին, արևելյան խնձորենին, սալորենին, հոնի ծառը, դեղաբույսերը ու տեղի վայրի բույսերը:

Ցածրադիր հարավահայաց կիրճերում բուսականության գերակշռող ձևն է գիհու խառը նոսրանտառը: Հանդիպում են գիհի արևելյան կամ արտուճը (*Juniperus polycarpus*), գիհի սրաթեփուկ կամ ցրտենի (*J. foetidissima*) և գիհի երկարատերև (*J. oblonga*) տեսակները: Շիբլյակներում սաղարթավոր և խառը նոսրանտառներում, ոչ-բարձր ծառերի նոսր և “լուսավոր” տնկարքներում աճում է Արևելյան կաղնին (*Quercus macranthera*), Վրացական թխկին (*Acer ibericum*), Ալեհեր կեռասենին (*Cerasus incana*), Ասպիրակ արևքուրիկատերևը (*Spyreae hypericifolia*): Հանդիպում են իլենու (*Lonicera*), գիհու (*Juniperus*), տանձենու (*Pyrus*), մասրենու (*Rosa*) տարբեր տեսակներ:

Խոտածածկույթում առկա են էֆեմերոիդ տարրեր, ինչպես, օրինակ՝ դակտիլորիզ դեղնավունը (*Dactylorhiza flavescens*): Այստեղ գարնանային խոնավ ամիսներին հնարավոր է խոնավասեր /մեզոֆիլ/ բուսատեսակների առկայություն, թեև գերակշռողը քսերոֆիլ տեսակներն են և էֆեմերները: Գարնանային խոտածածկի մեջ բնորոշ բուսատեսակներն են Կուսածաղիկ խոտային (*Vinca herbacea*), Բերենիկե բազմաբաժան (*Veronica multifida*), Խուլեղինջ ցողունազիրկ (*Lamium amplexicaule*), Սինդրիկ արևելյան (*Polygonatum orientale*), Ճանկխոտ արևելյան (*Ajuga orientali*), Ճանկխոտ հիոսական (*A. chia*) տեսակները: Շիրբյակի հետ կողք-կողքի հանդիպում են գազուտներ՝ փշոտ աստրագալների բուսուտներ, շրջապատված ճիմ առաջացնող հացազգի բուսատեսակներով:

Սաղարթավոր ծառային և թփային տեսակներից կարելի է հանդիպել նշենի ֆենցի (*Amygdalus fenzliana*), տանձենի ուռատերև (*Pyrus salicifolia*), հասմիկ թփուտային (*Jasminum fruticans*) և այլ քսերոֆիլ (չորասեր) տեսակներ:

Խոտային ծածկույթի մեջ առկա են և մարգագետնային, և տափաստանային բուսատեսակներ, դրանցից են՝ Իքսիոլիրիոն թաթարական (*Ixiolirion tataricum*), Դաշտավլուկ սոխուկավոր (*Poa bulbosa*), Անմոռուկ տարատիկ (*Myosotis heteropoda*), Կակաչ Բելանժեի (*Papaver minus*), Տերուկ անբաժակ (*Fumaria asepala*), Սաղավարտուկ արևելյան (*Scutellaria orientalis*), Խատուտիկ սովորականը (*Taraxacum officinale*), Իժախոտ իտալականը (*Echium italicum*), Խոնդատը (*Verbascum sp.*) և այլն:

Ամենուրեք հանդիպում են բանգի սև /*Hyosycuamus niger*/, եղինջ երկտուն /*Urtica dioica*/, երեքնուկ կարմիր /*Trifolium hybridum*/, Երեքնուկ սողացող /*Trifolium repens*/, Իշաովյուտ դեղատու /*Melilotus officinalis*/, Խատուտիկ դեղատու /*Taraxacium officinalis*/, Ծոսապաշար սովորական /*Capsella bursa pastoris*/, Հազարատերևուկ սովորական /*Achilea millefolium*/, Կատվալեզու եռաբաժան /*Bidens tripartita*/, Ձիաձետ դաշտային /*Ecuisetum arvense*/, Ճարճատուկ սովորական /*Cichorium intybus*/, Մասրենի շնային /*Rosa canina*/, Մատիտեղ թոչնային *Polygonium persicaria*/, Ոգնագլխիկ սովորական /*Echinopus ritro*/, Ջղախոտ մեծ /*Plantargo major*/, Ջղախոտ նշտարաձև /*Plantargo lanceolata*/, Սրոհունդ խոցված /*Hypericum perforatum*/, Տերեփուկ կապույտ /*Centaurea cyanus*/, Ուրց կոչիի /*Thymus kotschyanus*/ , Օշինդր դառը /*Artemisia absinthinum*/, Անանուխ երկարատերև /*Mentha longifolia*/, Ավելուկ զանգուր /*Rumex crispus*/, Դանդուռ բանջարանոցային /*Portulaca oleraceae*/, Մոշենի թխակապույտ /*Rubus caesius*/, Սիրբի սովորական /*Falcaria vulgaris*/, Փիփերթ արհամարված /*Malva neglecta*/ և այլն:

Անտառագուրկ լանջերի վրա լայն տարածված են նաև “շիրբյակ” անվանվող բուսական համակցությունները, որտեղ գերակշռում են փշոտ թփերը և ոչ բարձր ծառերը ցաքի փշոտը (*Paliurus spina-christi*), որին խառնվում են դրախտածառ սովորական (*Cotinus coggygria*), չմենի ամբողջաեզր (*Cotoneaster integerrimus*), փոշնի խոշոր (*Celtis glabrata*), ճապկի հարավի (*Swida australis*), հոն սովորական (*Cornus mas*), զկեռ սովորական (*Mespilus germanica*), պայթակենի կիլիկյան (*Colutea cilicica*), հասմիկ թփուտ (*Jasminum fruticans*) և այլ թփեր: Խոտածածկույթը ներկայացված է բոտրիխլոա սովորական (*Bothriochloa ischaemum*), անիսանտ տանիքային (*Anusantha tectorum*), գեղագլխիկ փայլուն (*Callicephalus nitens*), անմեռուկ չոլած (*Xeranthemum squarrosum*) և այլ տեսակներով:



Հայցվող և հարակից տարածքներում հանդիպում են ծառաթփային բուսականության հետևյալ տեսակները՝ ցաքի փշոտը, ճապկի հարավի Սզնի հովհարատերև, հոն սովորական, Թխկի դաշտային, Մարենի առատափուշ, մարենու այլ տեսակներ, Սալորենի սովորական, Սալորենի փշավոր, Մոշ:

	
<p>Սզնի սովորական</p>	<p>Հոն սովորական</p>
	
<p>Չկեռ</p>	<p>Սալոր սովորական</p>



Մոշ



Պայթակենի



Մասուր



Թխկի դաշտային



Ճապկի հարավի



Ցաք փշոտ

Աղյուսակում ներկայացվում է Սյունիքի մարզում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները:

Բույսերի անվանումը հայերեն և լատիներեն	Կատեգորիա	Տարածումը
Սոխ Դերդերիանի, <i>Allium derderianum</i> ,	EN B 1	Զանգեզուրի ֆլորիստական շրջանում՝ Բարգուշատի լեռնաշղթա, լեռնագագաթներ Կապուտջուղ, Խուստուփ, Բաղացսար
Քեմոն Կոմարովի, <i>Carum komarovii</i> , Karjag	CR B 1	Զանգեզուրի ֆլորիստական շրջանում, Խուստուփ լեռնագագաթում
Նվիկ կոնոֆալոսային, <i>Arum conophalloides</i> , Kotschy	EN B 1	Զանգեզուրի՝ Կապան և Մեղրու՝ Բերդաքար, Կալեր, Վահրավար, Շվանիձոր, Նյուվաղի ֆլորիստական շրջաններում
Վաղենակ պարսկական, <i>Calendula persica</i> , C.A.Mey	EN B 1	Զանգեզուրի՝ Ներքին Հանդ և Մեղրու՝ Շվանիձոր, Նյուվաղի ֆլորիստական շրջաններում
Տերեփուկ Ալեքսանդրի, <i>Centaurea alexandrii</i> Bordz.	EN B 1	Մեղրու՝ Մեղրի, Ալդարա, Շվանիձոր, Նյուվաղի ֆլորիստական շրջանում
Ոգնազլխիկ բազմատուն, <i>Echinops polygamous</i> , Bunge	EN B 1	Դարեղեգիսի՝ գյուղ Արփա և Մեղրու՝ Շվանիձոր, Կուրիս, Կարչևան, Լեհվազի ֆլորիստական շրջաններում
Լվածաղիկ Զանգեզուրի, <i>Tanacetum zangezuricum</i> , Chandjian	EN B 1	Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստական շրջաններում՝ Զանգեզուրի, Բարգուշատի, Մեղրու լեռնաշղթաներ
Շնկոտն գանգեզուրի, <i>Thlaspi zangezuricum</i> , Tzvel	EN B 1	Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստական շրջաններում
Զանգակ Զանգեզուրի, <i>Campanula zangezura</i> , Kolak	EN B 1	Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստական շրջաններում
Նոնեա վարդագույն, <i>Nonea rosea</i> Link.	VU* B I	Մեղրու (Շվանիձորի և Ալդարայի շրջակայք, լեռնագագաթ Բերդաքար) և Զանգեզուրի («Շիկահող» պետական արգելոց, լեռնագագաթ Խուստուփ) 16 ֆլորիստիկական շջաններում
Զազախտո կարմրակապույտ, <i>Erysimum lilacinum</i> E. Steinb.	EN B 1	Զանգեզուրի («Շիկահող» պետական արգելոց) և Մեղրու (Այգեձոր, Լիճք, Գյումարանց, Ագարակ, Վահրավար, գետի կիրճ) ֆլորիստական շրջաններում
Ծվծվուկ Խուստուփի, <i>Silene chustupica</i> Nersesian.	CR B 1	Զանգեզուրի ֆլորիստական շրջանում (Խուստուփ լեռնագագաթ)
Թանթանիկ ընձյուղակիր, <i>Sedum stoloniferum</i> Gmel.	VU* B I	Ապարանի (լեռնագագաթ Թեղենիս) և Զանգեզուրի (Ծավ, Ներքին Հանդ և Շիկահող գյուղի շրջակայք, լեռնագագաթ Խուստուփ)
Արգիրոլոբիում Բիբերշտեյնի, <i>Argylobium biebersteinii</i> P. W. Ball.	EN B 1	Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում («Շիկահող» պետական արգելոց, լեռնագագաթ Խուստուփ)
Գազ Պրիլիպկոյի, <i>Astragalus prilipkoanus</i> Grossh.	EN B 1	Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Աչատինի կիրճ, Կապանի և Քաջարանի լիջև, Կաթնառատ գյուղի շրջակայք)
Տափոլոռ խոզանատերև, <i>Lathyrus setifolius</i> L.	VU* B I	Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Որոտանի լեռնանցքի լանջերին և «Շիկահող» պետական արգելոցում
Աովույտ արաբական, <i>Medicago arabia</i> Huds.	VU* B I	Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում («Շիկահող» պետական արգելոց, Վահանավանքի շրջակայք)
Պոպուլիկ օղակաղի, <i>Corydalis verticillaris</i> DC.	EN B 1	Զանգեզուրի (լեռնագագաթներ Գագանասար և Խուստուփ) և Մեղրու (Լեհվազ գյուղի և Բողաքարի միջև, Ճգնավոր լեռ) ֆլորիստիկական շրջաններում
Թրաշուշան Շովիցի,	EN B 1	Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Մեղրի, Ալդարա,

Gladiolus szovitsii Grossh.		Շվանիձոր)
Վիշապագլուխ ողկույզային, Dracocephalu m botryoides, Stev	EN B 1	Արագածի (Գեգարտոսի կիրճ) և Զանգեզուրի (Զանգեզուրի և Բարգուշատի լեռնաշղթաների՝ Կապուտջուղ, Գազանալեռ, Արամազդ լեռնագագաթներ, գյուղ Արավուս)
Վարդակակաչ ֆլորենսկու, Tulipa florenskyi, Woronow	EN B 1	Մեղրու ֆլորիստական շրջանում (Ագարակ, Մեղրի, Կարչևան, Շվամիձոր, Նյուվադի)
Վարդակակաչ Սոսնովսկու, Tulipa sosnoskyi, Achverdov	EN B 1	Զանգեզուրի (Քաջարան, Լեռնաձոր, Փխրուտ, Տաթև , Շիկահող, Կապան) և Մեղրու (լեռնագագաթ Բերդաքար, Արծվաբերդ, Գյումարանց, Վարդանիձոր, Լիճք, Վահրավար և այլն) ֆլորիստական շրջաններում
Բանալոտ նիզականման, Polystichum lonchitis, Roth	EN B 1	Զանգեզուրի ֆլորիստական շրջանում (Քաջարանի շրջակայք, Խուստուփ լեռնագագաթ)
Գնարբուկ Վորոնովի, Primula vulgaris subsp. woronowii, Soo	EN B 1	Զանգեզուրի (<<Շիկահող>> պետական արգելոց, Ճակատեն գյուղի շրջակայք, Խուստուփ լեռնագագաթ) ֆլորիստական շրջանից
Գորտնուկ մազոտ, Ranunculus villosus DC	CR B 1	Զանգեզուրի (Ճակատեն գյուղի շրջակայք, Խուստուփ լեռնագագաթ) ֆլորիստական շրջանից
Սզնի, Ալոճ զանգեզուրյան, Crataegus zangezura Pojark	EN B 1	Զանգեզուրի (<<Շիկահող>> պետական արգելոց, Կապանի և Գորիսի շրջակայք) ֆլորիստական շրջանից
Տանձենի հիրկանյան, Pyrus hyrcana Fed.	EN B 1	Մեղրու (Շվանիձոր) և Զանգեզուրի (Վաչագան, Ծավ, Խուստուփ լեռնագագաթի ստորոտ) ֆլորիստական շրջաններում
Կտավախոտ մեղրու, Linaria megrica Tzvelev	EN B 1	Մեղրու (Տաշտուն, Լիճք, Կալեր գյուղերի շրջակայք) և Զանգեզուրի (Կապուտջուղ լեռնագագաթ) ֆլորիստական շրջաններում
Անմոռուկ կլորատերև- Andrachne rotundifolia	EN B 1	Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Մեղրի, Ալվանք, Նոնաձոր) <sup>[1]</sup> :

ՀՀ կարմիր գրքում գրանցված են նաև Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանում աճող անհետացման եզրին գտնվող հետևյալ բուսատեսակները: Սոխ Եգորովայի, Ձնձաղիկ Արտյուշենկոյի, Շերենբերգիա Ֆիշերի, Եզնակոխ սակավաճաճանչ, Մարգացնձու կովկասյան, Նովիկ կոնոֆալոսային, Տերեփուկ արմատագամբյուղային, Խոզանափուշ Գաբրիելյանի, Դորոնիկում Բալանզայի, Սինձ պալարակիր, Արաբախոտ փխրուն, Լրջուն Կարյագինի, Լրջուն Թախտաջանի, Վահանակերպ Գրոսսեյմի, Գնդապտուղ կասպիական, Բողկուկ Սպասկայի, Շնկոտեն հովանոցավոր, Կորնարիա կաշեկերպ, Ծվծվուկ Ռադեի, Իլենի թավշային, Բոշխ մանրագլխիկ, Բոշխ կախված, Գազ Աղասու, Տափոլոռ կասսիայի, Տափոլոռ խոզանատերև, Կորնգան մեսիթթական և այլ:

### **Կենդանական աշխարհ**

Շրջանի կենդանական աշխարհի համառոտ բնութագիրը բերվում է ստորև: Երկկենցաղները ներկայացված են 2 տեսակով՝ լճագորտ (*Rana ridibunda*) և կանաչ դոդոշ (*Bufo viridis*), սողունները՝ միջին մողես (*Lacerta media*), սովորական լորտու (*Natrix natrix*), ջրային լորտու (*Natrix tessellata*), կարմրափոր սահոճ (*Delichophis schmidti*): Ժայռային մերկացումների վրա նշվել են նաև կովկասյան ազամաներ (*Laudakia caucasica*) և ժայռային մողեսներ (*Darevskia raddei*):

Թռչուններից նկատվել են սևագլուխ վարսակուկ (*Embexiza melanocephala*), սպիտակ խաղտոսնիկ (*Motacilla alba*), սև կեռնեխ (*Turdus merula*), ափամերձ ծիծեռնակ (*Riparia riparia*) և այլն: Շահումյանի մոտակայքում՝ Կապանին մոտ, նկատվել են քաղաքային

ծիծեռնակների (*Delichon urbica*), ոսկեգույն մեղվակերների և (*Merops apiaster*) և սև ցինի (*Milvus migrans*) թռիչք:

Կաթնասուններից առկա են պարսկական ավազամուկ *Meriones persicus*, հասարակական դաշտամկան (*Microtus socialis*), մոխրագույն համստեր (*Cricetulus migratoricus*), ինչպես նաև անտառային մուկ (*Sylvaemus sylvaticus*):

Ողջի գետի և դրա վտակների վերին հոսանքներում նկատվում են *Barbus lacerta cyri*, *Alburnoides bipunctatus*, *Varicorhinus capoeta*: Հանդիպում են նաև գետային կրաբեր:

Համաձայն գրականական տվյալների, նախատեսվող գործունեության հարակից տարածքներում բավական հաճախ են հանդիպում ՀՀ Կարմիր գրքում գրանցված Հնդկական մացառախոզը /*Hystrix indica kess*/, Լայնականջ ոզնին /*Erinaceus auritus Gmelin*/ և Անտառակատուն /*Felis silvestris Scherber*/: Բարձրադիր լեռներում խիստ հազվադեպ կարող են հանդիպել Գորշ արջը /*Ursus arctos Linnaeus*/ և Ընձառյուծը /*Pantera pardus*/: Առավել արժեքավոր է Ջանգեզուրի բարձրադիր տեղանքներում պահպանվող Բեզուարյան այծը /*Capra aegagrus Erxleben*/ և Հայկական մուֆլոնը (*Ovis orientalis gmelinii*), որի ոչ մեծ խմբակները կարելի է նկատել լեռնային հարթավայրերում, հատկապես չհավվող ձյան մոտ:

Աղյուսակում ներկայացվում է Սյունիքի մարզում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները:


Order	Family	Genus	Species	Հայերեն անվանումը	Անգլերեն անվանումը		IUCN Red Data List
				Լայնականջ ոզնի	Erinaceus (Hemiechinus) auritus		
Insectivora	<b>Soricidae</b>	<i>Neomys</i>	<i>teres</i>	Կուտորա / Ջրային սրնչակ	Transcaucasian water shrew	LC	EN B1a+2a
Chiroptera	<b>Rhinolophidae</b>	<i>Rhinolophus</i>	<i>eurys</i>	Հարավային պայտաքիթ	Mediterranean horseshoe bat	NT	VU B1ab+2a
Chiroptera	<b>Rhinolophidae</b>	<i>Rhinolophus</i>	<i>eurys</i>	Արաբսյան գիշերաչղջիկ	Myotis schaubi araxenus		
Chiroptera	<b>Rhinolophidae</b>	<i>Rhinolophus</i>	<i>eurys</i>	Սսիական լայնականջ չղջիկ	Barbastella leucomelas		
Chiroptera	<b>Vespertilionidae</b>	<i>Miniopterus</i>	<i>schreibersii</i>	Սովորական երկարաթև	Schreiber's bat, common bent-winged bat	NT	VU B1ab (iii)+2ab(iii)
Rodents	<b>Hystriidae</b>	<i>Hystrix</i>	<i>indica</i>	Հնդկական վայրենակերպ	Indian porcupine	LC	VU B2a
Carnivora	<b>Mustelidae</b>	<i>Lutra</i>	<i>lutra</i>	Ջրասամույր	Eurasian otter, Common otter	NT	EN
Carnivora	<b>Mustelidae</b>	<i>Vormela</i>	<i>peregusna</i>	Խայտաքիս	Marbled polecat	VU	VU A2c+B1 b(iii)
Carnivora	<b>Ursidae</b>	<i>Ursus</i>	<i>arctos</i>	Գորշ արջ	Brown bear	LC	VU B1 b(iii)
Carnivora	<b>Felidae</b>	<i>Felis</i>	<i>silvestris</i>	Եվրոպական անտառակատու	wild cat	LC	VU B1ab (iii)
Carnivora	<b>Felidae</b>	<i>Felis</i>	<i>silvestris</i>	Մանուկ	Otocolobus manul		
Carnivora	<b>Felidae</b>	<i>Pantera</i>	<i>pardus</i>	Կովկասյան ընձառյուծ	leopard	NT	CR
Cetartiodactyla	<b>Bovidae</b>	<i>Capra</i>	<i>aegagrus</i>	Բեզուարյան այծ	Wild goat	VU A2cd	VU
Cetartiodactyla	<b>Bovidae</b>	<i>Ovis</i>	<i>orientalis</i>	Հայկական մուֆլոն	Mouflon	VU	EN

Հայցվող տարածքի նախնական դաշտային ուսումնասիրության ժամանակ ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ ինչպես նաև դրանց աճելա և ապրելավայրեր չեն հայտնաբերվել:

Ուսումնասիրությունները իրականացվել են դաշտային աշխատանքների դասական եղանակների՝ երթուղային և կիսաստացիոնար, ինչպես նաև լուսանկարման միջոցով: Նմուշների մշակումն ու տեսակների որոշումը կատարվել է լաբորատոր պայմաններում: Տեսակների որոշումը և անվանումների ճշգրտումը կատարվել է “Հայաստանի ֆլորայի” 11 հատորյակի միջոցով, ուսումնասիրվել են մի շարք լրացուցիչ աշխատություններ, մասնագիտական գրականություն: Հազվագյուտ և անհետացող տեսակների կարգավիճակը ճշտվել է ըստ Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր Գրքերի և Բնության և նրա ռեսուրսների պահպանության Միջազգային միության հանձնաժողովի կողմից մշակված չափանիշների:

▪ **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Բուն հանքերակման տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այստեղ համապատասխան մասնագետների ուսումնասիրությամբ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա և ապրելավայրեր:



Պետական արգելոցներ	Պետական արգելավայրեր
3 “Շիկահող”	30 “Գորիսի”
Ազգային պարկեր	31 “Զանգեզուրի”
7 “Արևիք”	32 “Բողաքարի”
	33 “Մոսու պուրակ”
	34 “Խուստուլի”
	35. “Սև լիճ”

Նկար 12. Բնության հատուկ պահպանվող տարածքներ



Նկար 13.

Հայցվող տարածքի հեռավորությունը Զանգեզուր պետական արգելավայրից կազմում է մոտ 0,5կմ, «Խուսուուփ» պետական արգելավայրից 2,8կմ

**<<Զանգեզուր>> արգելավայր**

"Զանգեզուր" արգելավայրը ստեղծվել է 2009 թ. հոկտեմբերի 15-ին (ՀՀ կառավարության N1187-Ն որոշում) և հանդիսանում է նոր պահպանվող տարածքներից մեկն է, որի նպատակն է ապահովել Սյունիքի մարզի Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի մերձալպյան մարգագետնային և մարգագետնատափաստանային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումն:

Արգելավայրի տարածքը կազմում է 25711.59հա, զբաղեցնում է Զանգեզուրի լեռնաշղթայի Ողջի և Գեղի գետավազաններն ու Բարգուշատի լեռնաշղթայի հարավային լանջերը և սահմանակցում է Քաջարան քաղաքի լեռնագործական շրջանին և Մեղրու լեռնաշղթային՝ արևելքում:

**"Սոսու պուրակ" արգելավայր**"Սոսու պուրակ" արգելավայրը իր մեջ ներառում է արևելյան սոսու Կովկասում ամենախոշոր բնական պուրակը: Այն ստեղծվել է 1958 թ-ին ՀՍՄՀ Մինիստրների Խորհրդի (թիվ Պ-341) որոշմամբ և այժմ զբաղեցնում է 64.2 հա տարածք: Մինչև 2004 թ. այն գտնվում

էր Կապանի անտառտնտեսության ենթակայության տակ, իսկ հետո բնապահպանական գործունեությունը խստացնելու նպատակով հանձնվել է "Շիկահող" արգելոցին: Արգելավայրը գտնվում է "Շիկահող" արգելոցին կից Ծավ գետի հովտում՝ Ներքին Հանդ գյուղի մոտ ծովի մակարդակից 700-800 մ բարձրության վրա: Մարդու գործունեության ազդեցությունը մեղմացնելու համար արգելավայրը շրջապատված է մոտ 100 մ լայնություն ունեցող բուֆերային գոտով, որտեղ ընկած են Ներքին Հանդ գյուղի և Կապանի անտառտնտեսության հողերը:

Շտրհիվ ցածր ռելիեֆի, արգելավայրի կլիման մեղմ է ու բավականին տաք: Ձնածածկը ձևավորվում է ոչ ամեն տարի, արագ հալվում է և հասնում ոչ ավել, քան 10 սմ: Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 530 մմ:

Սոսու պուրակը ունի ձգված տեսք՝ Ծավ գետի երկայնքով 50-200 մ լայնությամբ և 10 կմ երկարությամբ: Պուրակի հիմքում ընկած են 200-250-ամյա հազարից ավել ծառեր, որոնք հասնում են 30-35 մ բարձրությանը և պահպանվել են մինչ այժմ: Բացի սոսուց, այստեղ աճում են նաև այլ արժեքավոր և հազվագյուտ տեսակներ՝ հունական ընկուզենին, արաքսյան կաղնին, հունական շրջահյուսը, թավշային իլենին և այլն:

Ողնաշարավորների ֆաունայից բավականին բազմազան են սողունները՝ 7 տեսակի մողեսներ, 8 տեսակի օձեր և 2 տեսակի կրիաներ: Հազվագյուտ տեսակներից հանդիպում են շերտավոր մերկաչքը, կատվածը և անդրկովկասյան սահնօձը:

### **"Շիկահող" պետական արգելոց**

"Շիկահող" պետական արգելոցը ստեղծվել է 1958 թ-ին Կապանի անտառտնտեսության հողերի վրա ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդի թիվ Պ-341, 13.09.1958 թ. որոշմամբ՝ Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լանջերի վրա գտնվող լայնատերև անտառների յուրահատուկ ֆլորան և ֆաունան պահպանելու, ուսումնասիրելու և վերականգնելու նպատակով: 1963 թ-ին այն վերափոխվել է Բարթասի արգելավայրի և վերականգնվել է որպես արգելոց միայն 1975 թ-ին: Պահպանության հիմնական օբյեկտներն են հանդիսանում լայնատերև (կաղնու, բոխու) անտառները, յուրահատուկ բուսական համակեցությունները (կենու, արևելյան սոսու և արևելյան հաճարենու պուրակները), դրանց բուսական և կենդանական աշխարհը /վայրենակերպ, հովազ, մուֆլոն, բեզուարյան այծ/: Արգելոցը գտնվում է Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում և զբաղեցնում է 12137.1 հա տարածք: Արգելոցը բաղկացած է Շիկահողի և Սթնաձորի տեղամասերից: Մինչև 2006 թ-ը դրա տարածքը ավելի փոքր էր՝ 10330 հա:

Շիկահողը զբաղեցնում է Ծավ և Շիկահող գետերի ավազանները Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լանջերի վրա և իր մեջ ներառում է Շախբուզ (2372 մ), Գյումարանց (2366 մ), Մազրա (2198 մ) և Բարթաս (2186 մ) լեռնագագաթները: Արգելոցին սահմանակցում են Շիկահող, Սրաշեն, Ծավ, Շիշկերտ և Ներքին Հանդ գյուղերը: Արգելոցի սահմաններն անցնում են հարավում Մեղրու լեռնաշղթայի ջրբաժանով, իսկ մնացած կողմերից՝ վերը նշված գյուղերի համայնքային հողերի սահմաններով:

### **<<Խուստուփ>> պետական արգելավայր>>**

<<Զանգեզուր>> կետոլորտային համալիր>> ՊՈԱԿ-ի ստեղծման հետ միասին ստեղծվել է «Խուստուփ» պետական արգելավայր մ/ճ: Այն զբաղեցնում է 6946.74 հա և ընդգրկում է Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնագանգվածի բարձր լեռնային հատվածը: <<Խուստուփ>> պետական արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնագանգվածի անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնատափաստանային և մարգագետնային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի, լանդշաֆտային ու



կենսաբանական բազմազանության, բնության հուշարձանների, բնության ժառանգության պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

**<<Արևիկ ազգային պարկ>>**

Բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի զարգացման ու ընդլայնման նպատակով Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանում ընդունվեց <<Արևիկ>> ազգային պարկ ստեղծելու /15.10.2009թ. N 1209-Ն/ որոշումը: <<Արևիկ>> ազգային պարկը ստեղծվել է 2009թ. : Ազգային պարկի տարածքում ներկայացված են լանդշաֆտային գոտիների գրեթե ողջ համակարգը՝ սկսած ցածր և միջին լեռնային կիսաանապատներից մինչև բարձր լեռնային տափաստաններն ու Մեղրի գետի վերին հոսանքների մերձալպյան տիպի լանդշաֆտը: Տարածքը, համաձայն ՀՀ կառավարության 2 հուլիսի 2015 թվականի N 731-Ն որոշման, կազմում է շուրջ 31211.9հա: Հատուկ ուշադրության առարկա են վայրի բնության հազվագյուտ և ոչնչացող տեսակները: 60 տարիների ընթացքում առաջին անգամ յաստանում հայտնաբերվել է զուլավոր բորենի, որը գրանցված է Հայաստանի Կարմիր Գրքում:

**«Սև լիճ» պետական արգելավայրը** կազմավորվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 12-ի «Սև լիճ» պետական արգելոցի կարգավիճակը փոփոխելու մասին» N 976 որոշմամբ:

Արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում՝ Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասար հրաբխային կոնի մերձկատարային մասում, 2670 մետր բարձրության վրա: Նրա տարածքն ընդգրկում է սառցադաշտային ծագման Սև լիճը (200 հա մակերեսով) և առափնյա մերձալպյան մարգագետնային էկոհամակարգերը 40 հա մակերեսով): Արգելավայրի կազմավորման հիմնական նպատակը Սև լճի ջրային և նրա հարակից ցամաքային էկոհամակարգերի, բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունն ու կայուն օգտագործումը, Սևանա լճի իշխան և բեղլու ձկնատեսակների արհեստական վերարտադրության համար անհրաժեշտ ձկնային պաշարի աճեցումն ապահովելն է:

Ներկայացված բոլոր ԲՀՊ տարածքները ներկայում գտնվում են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ, որի գործունեության առարկան և նպատակը «Արևիկ» ազգային պարկի, «Շիկահող» պետական արգելոցի, «Սոսու պուրակ», «Զանգեզուր», «Խուստուփ», «Բողաքար» և «Սև լիճ» պետական արգելավայրերի տարածքների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, բնության տարեգրության վարման ապահովումը, ինչպես նաև ազգային պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

Գործունեությունն իրականացնելիս ընկերությունը կառաջնորդվի ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 15-ի ««Զանգեզուր» պետական արգելավայր ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 926-ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու մասին» N 1187-ն որոշմամբ և «Զանգեզուր» պետական արգելավայրի կանոնադրությամբ սահմանված պահանջներով,

53.	«Սատանա» բնական քանդակ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում
54.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի շրջակայքում
55.	«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքի հս-արլ եզրին
56.	«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Քաջարանի հանքային ջրի աղբյուրից հս-արլ, Ողջի գետի ձախ ափին
57.	«Մալկի ինտրուզիա» ներժայթուկ	Սյունիքի մարզ, Մեղրիի ենթատարածք, Ալվանք գյուղից մոտ 1-1,5 կմ հս, լքված Մալկ գյուղի մոտ
58.	«Անանուն» ապարների մերկացումներ	Սյունիքի մարզ, Երևան-Սիսիան խճուղու 180-181 կմ-ի ձախ և աջ կողմերում
59.	«Խորձոր» V-աձև կիրճ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 1.5-2.0 կմ հս-արլ
60.	«Անանուն» էրոզիոն ռելիեֆ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 2,5 կմ հս-արլ, Բերձոր տանող ճանապարհի ձախ կողմում
61.	«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Հալիձոր գյուղից 2 կմ արմ, Որոտանի կիրճում
62.	«Անանուն» ապլիտային դայկաներ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից 30-35 կմ հվ
63.	«Հերթ» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքից 3 կմ հս-արմ, «Շաքի» ջրվեժի մոտ
64.	«Փղի ճտեր» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից մոտ 25 կմ հվ, «Շիկահող» պետարգելոց տանող ճանապարհին
65.	«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
66.	«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
67.	«Շիչքար» (Բաղաքար) դայկա	Սյունիքի մարզ, Բաղաքար գետի աջ և ձախ կողմերում
68.	«Անանուն» բուրգանման մնացուկներ	Սյունիքի մարզ, Վերիշեն գյուղից 2 կմ հս, Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում
69.	«Սատանի կամուրջ» բնական կամուրջ	Սյունիքի մարզ, Տաթև գյուղից 2,5 կմ հս-արլ
70.	«Բնական թունել»	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա
71.	«Ագարակի» բրածո ֆլորա	Սյունիքի մարզ, Ագարակ քաղաք
72.	«Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա	Սյունիքի մարզ, Շամբ գյուղից 500 մ հս-արմ, Որոտան գետի ձախ ափին, 1300 մ բարձրության վրա
24.	«Ջրաղացի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հվ-արմ մասում, ծ.մ-ից 1770 մ բարձրության վրա
25.	«Ծորձոր» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 4 կմ հեռավորության վրա, Ծորձոր գետի աջ ափին, ծ.մ-ից 1650 մ բարձրության վրա
26.	«Վարդանաձորի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 17 կմ հվ-արմ, Սիսիան-Նախիջևան ավտոճանապարհից 160 մ ներքև
27.	«Սմբուլի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից հվ-արլ մասում, ծ.մ-ից 1740 մ բարձրության վրա
28.	«Անապատի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հարավային ծայրամասում, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
29.	«Ջրաղացի» աղբյուր	Սյունիքի մարզ, Բարձրավան գյուղից 0.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա
30.	«Սևջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի հս ծայրամասում, Գեղի գետի ձախ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1600 մ բարձրության վրա
31.	«Արքայից» աղբյուր	Սյունիքի մարզ, Դավիթ Բեկ գյուղի հս ծայրամասում, Քաշունի գետի կիրճի աջ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1065 մ բարձրության վրա

32.	«Քյահրիզ» աղբյուր	Սյունիքի մարզ, Նռնածոր գյուղից 1.5 կմ հս-արլ, ծ.մ-ից 670 մ բարձրության վրա
33.	«Ներքին» աղբյուր	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի հվ մասում, սողանքի մարմնի աջ կողմում, ծ.մ-ից 1250 մ բարձրության վրա
34.	«Մեծ Նովի» աղբյուր	Սյունիքի մարզ, Շինուհայր գյուղից 0.5 կմ հս-արմ, ճամփ-եզրին, խաչքարի մոտ
35.	«Որոտան» աղբյուր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հս ծայրամասում
36.	«Կաթնաղբյուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձավեր գյուղի հվ-արմ ծայրամասում, անտառի եզրին, Քաշունի գետի աջ ափին, ծ.մ-ից 1570 մ բարձրության վրա
37.	«Սպիտակջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ ափին, ծ.մ-ից 1480 մ բարձրության վրա
38.	«Շռան» աղբյուր	Սյունիքի մարզ, Քաշունի գյուղից 1.2 կմ հվ-արլ, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
39.	«Անանուն» աղբյուր	Շաքի գյուղի հս-ամ ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա
16.	«Ծաղկարի» լիճ	Սյունիքի մարզ, Ջանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում, Ծաղկարի գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3271,5 մ բարձրության վրա
17.	«Կապուտան» (Գոգի) լիճ	Սյունիքի մարզ, Քաջարան գետի ակունքներում, Քաջարան քաղաքից մոտ 5-6 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3202 մ բարձրության վրա
18.	«Անտակ» լիճ	Սյունիքի մարզ, Բռնակոթ գյուղի Ջարդով ջրամբարից 1 կմ հս-արմ
19.	«Գազանա» լիճ	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի ակունքներում, Գեղի գյուղից մոտ 9 կմ հս-արլ, ծ.մ-ից 3111,8 մ բարձրության վրա
20.	«Կապույտ» լիճ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8 կմ հս-արմ
21.	«Բերդալիճ» լիճ	Սյունիքի մարզ, Ծղուկ գյուղից 13 կմ հս-արլ, ծ.մ-ից 3005, 7 մ բարձրության վրա
22.	«Կապուտջուղ» ջրվեժներ	Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքից 3.0 կմ արմ, Կապուտջուղ գետակի վրա
23.	«Շինուհայր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ
24.	«Աղվան» ջրվեժ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ձախ վտակ Մալև գետակի, լքված Մալև գյուղից 2.0 կմ հվ-արլ
25.	«Վարդանիծոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Վարդանիծոր գյուղից 2.5 կմ հս-արմ, Բերդաքար գետի Վարդանիծոր վտակի վրա
26.	«Աջիբաջ» ջրվեժ	Սյունիքի մարզ, Գեղի գետի ձախակողմյան Աջիբաջ վտակի վրա, համանուն գյուղից 4 կմ հս-արմ
27.	«Շաքի» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախակողմյան Շաքի վտակի վրա
28.	«Պառավածոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Բերդաքար գետի ձախակողմյան վտակի վրա, Վարդանիծոր գյուղից 3 կմ հս-արմ
7.	Սբ. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 0.5 կմ արմ, Անգեղակոթ-Շաղաթ ճանապարհից աջ
8.	Արծվանիկ գյուղի բնական քարանձավներ	Սյունիքի մարզ, Արծվանիկ գյուղից 3 կմ հվ, Երիցավանքի շրջակայքում
9.	«Որոտան» բնապատմական համալիր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին աջ ու ձախ ափերին
10.	Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի արլ մասում, Վարարակ գետի ձախ ափին
11.	«Մեղրիի սոսի»	Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի
12.	«Շիբլյակ»	Սյունիքի մարզ, Կապան քաղաք, Առաջածոր տեղամասում, 800-900 մ բարձրության վրա
13.	«Սֆազնունային մամուռներ»	Սյունիքի մարզ, Գոռայք գյուղից 5-6 կմ հս, Որոտանի լեռնանցքի մոտ

Տեղամասերից մոտակա 4-5 կմ հեռավորության վրա բնության հուշարձաններ չկան:

## 6. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ



Նկար 14.

Տարածքը	4 506 քառ. կմ
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, %	15.2
Համայնքներ, 2023թ. տարեկգրի դրությամբ	7
Քաղաքներ	7
Գյուղեր	132
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկգրի դրությամբ այդ թվում՝	134.6 հազ. մարդ
քաղաքային	90.2 հազ. մարդ
գյուղական	44.4 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.,%	4.5
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.,%	67.0
Գյուղատնտեսական նշանակության հողեր այդ թվում՝ վարելահողեր	306 003.6 հա 43 860.4 հա

Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Այն հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից պետական սահմանով՝ Իրանին, արևմուտքից և արևելքից՝ Ադրբեջանին: Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են Մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 18.8%,
- գյուղատնտեսություն՝ 6.4%,
- շինարարություն՝ 8.9%,
- մանրածախ առևտուր՝ 2.1%,
- ծառայություններ՝ 1.6 %,

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներն են:

Մարզի արդյունաբերության հիմնական ոլորտը հանքարդյունաբերությունն է, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանին կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում:


Սյունիքի մարզում է գտնվում Մեղրու սահմանային անցակետը:

2010թ.-ից գործում է 5.7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար «Տաթևեր» ճոպանուղին (առավելագույն բարձրությունը 380 մ), որն անցնում է Որոտան գետի կիրճով, ձգվում սարերի վրայով և Հալիձոր գյուղից հասնում Տաթևի վանական համալիր:

**Մարզկենտրոն Կապան քաղաքը** (2023թ. տարեսկզբին՝ 41.3 հազ. մարդ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3 201 մ), Երևանից 301 կմ հեռավորության վրա:

Տնտեսության առաջատար ոլորտն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և էլեկտրական արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

**Քաջարան քաղաքը** (2023թ. տարեսկզբին՝ 6.9 հազ. մարդ), գտնվում է Երևանից 326 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 25 կմ: ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա: Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որում առանձնանում են սննդամթերքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը: Քաջարանում է գտնվում ՀՀ ամենամեծ՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը:



Ստորև ներկայացված են մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալներն ըստ արտադրության բաժինների (մլն. դրամ).

Ամբողջ արդյունաբերությունը	Այդ թվում՝			
	հանքագործական արդյունաբերություն	մշակող արդյունաբերություն	էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	ջրամատակարարում կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
516277.0	441156.5	43719.9	29942.5	1458.3

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների հետևյալն է.

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն-դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն-դրամ	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
Ամբողջ արդյունաբերությունը այդ թվում՝	516277.2	519102.1	102.8
հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	441156.5	444017.0	104.9
Մշակող արդյունաբերություն, որից՝	43719.9	43684.3	99.4
սննդամթերքի արտադրություն	37480.5	37428.6	98.6
խմիչքների արտադրություն	500.5	600.9	122.4
մանածագործական արտադրատեսակների արտադրություն	67.2	70.9	87.6
հագուստի արտադրություն	89.1	89.1	87.7
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	2910.6	2824.7	88.7
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորանքից	1606.1	1625.1	212.3
Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղափոխում	386.7	386.8	110.2
էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	29942.5	29942.5	78.1
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	1458.3	1458.3	111.3

Մարզի ամենագրավիչ վայրերից մեկը հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձան Տաթևի վանական համալիրն է (IX դար), որտեղ 1390-

1435 թթ. գործել է Տաթևի նշանավոր համալսարանը: 2010թ.-ին շահագործման է հանձնվել 5.7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար «Տաթևեր» ճոպանուղին (առավելագույն բարձրությունը 380 մ), որն անցնում է Որոտան գետի կիրճով, ձգվում սարերի վրայով և Հալիձոր գյուղից հասնում Տաթևի վանական համալիր:

Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ.-ին շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան- Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս:

Մարզի տարածքում գործող կրթական հաստատությունների քանակը հետևյալն է:

Նախադպրոցական հաստատություններ	53
Հանրակրթական ուսումնական հաստատություններ	117
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	17
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական	5
Պետական միջին մասնագիտական ուսումնական	7
Պետական բարձրագույն ուսումնական	2
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	2
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1

Օգտակար հանածոներով Սյունիքը Հայաստանի Հանրապետության ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի, պեռլիտի և դիատոմիտների պաշարներ):

Երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսված տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Քաջարան համայնքում:

### **Պատմական ակնարկ**

Անհիշելի ժամանակներից Քաջարանի բնակավայր լինելու մասին են վկայում Գանձասար լեռան վրա մինչև 1950-ական թվականները պահպանված հեթանոսական մատուռը, քաղաքի տարածքում հայտնաբերված հանքախորշերը, ձուլարանների հետքերը, հանքանյութի թափվածքներ: Դրանք վկայում են, որ Քաջարանի տարածքում պղինձ են ձուլել դեռևս բրոնզի դարում: Քաղաքի տարածքը մաս է կազմել պատմական Սյունիք նահանգի Չորք գավառին: Արշակունիների պետության անկումից /428թ/ հետո ողջ Զանգեզուրի հետ միացվել է Իրանին, VII դ վերջերին տիրել են արաբները, IX-Xդդ եղել է Բագրատունիների թագավորության կազմում, իսկ X-XI դդ անկախ Սյունիքի թագավորության կազմում: Քաջարանի Անդոկավան թաղամասի տարածքում է գտնվում Բաղաբերդը, պատմական Հայաստանի խոշորագույն պաշտպանական կառույցներից մեկը; 1170 թ. Բաղաբերդի անկումով /այն դավաճանությամբ գրավեցին Գանձակի սելջուկները Ելակուզ ամիրայի



գլխավորությամբ/ վերացավ Սյունյաց թագավորությունը: XI-XI դդ տարածքին տիրել են սելջուկները, XIII-XIV դդ՝ մոնղոլները, Կարա-կոյունլու և Ակ-կոյունլու թուրքմենական ցեղերը, իսկ XVI դարից՝ պարսիկները; XVIII դարի 20- ական թվականներին տարածքի բնակիչները մասնակցել են Դավիթ-Բեկի գլխավորած ազատագրական պայքարին: 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով միանում է Ռուսաստանին, մտնելով նախ Ղարաբաղի պրովինցիայի, ապա՝ Ելիզավետպոլի նահանգի մեջ; Քաղաքի ընդերքի հետազոտմամբ առաջինը զբաղվել է Գ.Աբիխը՝ 1835թ.: 1850-ին հույները կառուցել են պղնձաձուլական գործարան: 1918-21թթ մտնում է Հայաստանի առաջին Հանրապետության կազմի մեջ; Բնակիչները ակտիվ մասնակցություն են ունեցել Գարեգին Նժդեհի գլխավորած ազատագրական պայքարին: Սովետական կարգերի հաստատումից հետո՝ 1939-45-ին կատարվել է ընդերքի մանրամասն հետազոտում; 1945-ից շահագործվում է Գանձասարի պղնձամոլիբդենային հանքը, իսկ 1952-ին գործարկվում է „ԶՊՄԿ, ՓԲԸ-ն: Քաջարանի, որպես քաղաքի, ձևավորումը կապված է հանքի շահագործման և կոմբինատի ստեղծման հետ; 1958-ին Քաջարան և Ողջի ավանների միացումով առաջացել է Քաջարան քաղաքը՝ 11 հազար բնակչով, որի գլխավոր հատակագիծը մշակվել է 1965թ-ին /ճարտարապետներ՝ Ա.Հարությունյան, Հ.Դավթյան և ուրիշներ/ Քաղաքի սարածքում են եղել պատմական հիշատակություն ունեցող հետևյալ բնակավայրերը. Քաջարանց /Կաճաճուտ/, Վերին Հանդ /Բանիս/. Ողջի. Արալըղ/Արալեզ// գյուղերը; Բաղաբերդ, Զևա, Բաղակու քար, Աչաղու բերդերն ու ամրոցները:

Տնտեսություն: Տնտեսության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է; Քաղաքում գործում է Հայաստանի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություններից մեկը՝ „Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ,, ՓԲԸ-ն: Գործում են նաև այլ ձեռնարկություններ՝ „Քաջարանի կոմունալ տնտեսություն,, ԲԲԸ, որը իրականացնում է քաղաքի կենցաղային աղբահանությունը, „Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն,, ՓԲԸ՝ քաղաքի ջրի սանմաքրման աշխատանքները և „Հայաստանի էլ ցանցեր,, ՓԲԸ Քաջարանի մասնաճյուղը; Քաղաքում իրականացվում է նաև զազամատակարարումը, որի արդյունքում քաղաքը հիմնովին զազիֆիկացված է; Քաղաքն ունի նաև բշկական հաստատություններ՝ „Քաջարանի բժշկական կենտրոն,, և Քաջարանի պոլիկլինիկա; Կրթություն, մշակույթ, սպորտ Համայնքի տարածքում գործում են 2 միջնակարգ դպրոցներ, որոնք հիմնովին վերանորոգվել և ապահովված են տեղական ջեռուցման համակարգով, 2 նախադպրոցական հաստատություն, որից մեկը գտնվում է համայնքի ենթակայության տակ, իսկ մյուսը՝ „ԶՊՄԿ,, ՓԲԸ-ի; Քաղաքում գործում են նաև „Քաջարանի արհեստագործական ուսումնարան,, ՊՈԱԿ, „Քաջարանի արվեստի մանկական դպրոց,, ՊՈԱԿ, ինչպես նաև „Քաջարանի ՄՊՄԴ,, ; Քաղաքի մշակութային ծրագրերը իրականացվում է Քաջարան համայնքի մշակույթի բնագավառի կողմից և անց է կացվում Քաջարանի մշակույթի պալատում; Քաղաքում գործում են էկոլոգիական „ Կենի,, կազմակերպությունը ,որը իրականացնում է շրջակա միջավայրին առընչվող ծրագրեր,և որի շրջանակներում մշտապես աջակցում է Քաջարանի բժշկական կենտրոնի վերազինման և բուժապասարկման բարելավմանը, „Քաջարան,, հիմնադրամը, որի ֆինանսական միջոցները գոյանում են բնակիչների կամավոր հատկացումներից, իրագործում է քաղաքի բարեկարգման , սոցիալական և դպրոցների օժանդակության ծրագրեր;

- Հողային և այլ բնական ռեսուրսներ
- Հողեր (ընդամենը)՝ 1996 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 970 հա, որից՝
  - խոտհարք՝ 9 հա, արոտ՝ 588 հա, այլ հողատեսք՝ 351 հա
  - բնակավայրերի հողեր՝ 105 հա,
  - արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 779 հա
  - էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 2 հա
  - հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 7 հա,
  - անտառային հողեր՝ 124 հա, որից անտառածածկ՝ 122 հա
  - ջրային հողեր՝ 8 հա

▪ **Պատմության, մշակութային հուշարձաններ**

Սյունիքի մարզի Կապա և Քաջարան քաղաքների պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 15 մարտի 2007 թվականի N 385-Ն որոշումով հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:

**8.1 ԿԱՊԱՆ քաղաք**

Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարները)		Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշատակությունը (հանրապետական, տեղական)	Ծանոթագրություն <sup>2</sup>
1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ «ԿԱՏԱՐԱՎԱՆՔ»	10-18 դդ.	քաղաքից 5 կմ ամ, Ողջի գետի աջ ափին, Նախկին Ջրախոր գյուղի մոտ, «Տանձու լենջ» վայրում	Հ	1
	1.1		Դիտակետ	10-12 դդ.	Ողջի գետի ձախ ափին	Հ	1.1
	1.2		Շինություններ օժանդակ	10-11 դդ.	ամրոցի տարածքի ամ և հվ-ամ կողմերում	Հ	1.2
	1.3		Պալատական համալիր	10-12 դդ.		Հ	1.3
2			ԱՐՉԱՆ «ՋԱՆԳԵՉՈՒՐՑԻ ԱՂՋԻԿԸ»	1978 թ.	ավտոկայարանամերձ հրապարակում	Հ	2

3		ԱՐՁԱՆ «ՔԱԶԱՐԱՆԻ ԲԱՆԱԼԻՆ»	1966 թ.	Կապան-Քաջարան մայրուղու ձախ կողմում, Ողջի գետի աջ ափին	Հ	3
4		ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 1 հազ.	քաղաքից 5 կմ հս-ամ, Ողջի գետի ձախ ափին, ձորում	Հ	4
5		ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍ ԱԶԱՂՈՒ (ՀԱՄԼԵՏԱՎԱՆ)		քաղաքից 5-6 կմ հս-ամ		5
	5.1	Ամրոց «Կկոց քար»	10 դ.	Բաղաբերդ ամրոցից աե	Հ	5.1
	5.2	Գյուղատեղի «Աչաղու»	10-18 դդ.	թաղամասի հս կողմում, անտառապատ լեռնալանջին	Հ	5.2
	5.2.1	Գերեզմանոց	13-14 դդ.		Հ	5.2.1
	5.2.2	Եկեղեցի	17-18 դդ.	գերեզմանոցի տարածքում	Հ	5.2.2
	5.3	Հուշարձան ազատամարտիկ Համլետ Քոչարյանի	1991 թ.	թաղամասի ան եզրին	Տ	5.3
	5.4	Մատուռ	17-18 դդ.	Դ. Հարությունյանի տնամերձ հողամասում	Հ	5.4
9		ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍ ՇՂԱՐՇԻԿ (ՇՀԱՐՁԻԿ)		քաղաքից հս-ամ		9
	9.1	Գերեզմանոց	15-16 դդ.	թաղամասի հվ կողմում	Հ	9.1
	9.2	Գյուղատեղի	10-13 դդ.	թաղամասի դիմաց, Ողջի գետի աջափնյա անտառապատ ձորակում, Վահանավանքի աե կողմում	Հ	9.2
	9.3	Գյուղատեղի «Խնկանց»	10-17 դդ.	թաղամասից 1 կմ աե	Հ	9.3
	9.3.1	Գերեզմանոց	10-13 դդ.		Հ	9.3.1
	9.3.2	Եկեղեցի «Խնկոց վանք»	17 դ.	գյուղատեղիի կենտրոնում	Հ	Եկեղեցի Կարաքիլիսե (9.3.2): Ենթակայությամբ ներկայացված է 2 հուշարձան (9.3.2.1-9.3.2.2)
	9.4	Դամբարանադաշտ	Ք.ա. 7-6 դդ.	Վահանավանքից 1 կմ հս-ամ, «Էլեկտրոն» ճամբարի տարածքում	Հ	9.4
	9.5	Կամուրջ	17-18 դդ.	թաղամասից 1 կմ հվ-ամ, Վահանավանք տանող կամրջից 500 մ ամ, Ողջի գետի վրա	Հ	ավերված (9.5)
	9.6	Մետաղաձուլարան	Ք.ա. 14-13 դդ.	Վահանավանքից մոտ 1 կմ հս	Հ	9.6

	<b>9.7</b>	Վանական համալիր Վահանավանք	10-11 դդ.	թաղամասի դիմաց, Ողջի գետի աջափնյա անտառապատ սարավանջին	Հ	9.7
	<b>9.7.1</b>	Աղբյուր Խիկարի	10-11 դդ.	համալիրից մոտ 200 մ աե	Հ	9.7.1: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 1 հուշարձան (9.7.1.1)
	<b>9.7.2</b>	Աղբյուր Վահանի	10-11 դդ.	համալիրից 70 մ աե, ճանապարհի աջ կողմում	Հ	9.7.2: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 1 հուշարձան (9.7.2.1)
	<b>9.7.3</b>	Գավիթ	10 դ.	կից է Սբ. Գրիգոր Եկեղեցուն ամ-ից	Հ	9.7.3: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 6 հուշարձան (9.7.3.1-9.7.3.6)
	<b>9.7.4</b>	Գավիթ	10-11 դդ.	կից է Սբ. Աստվածածին Եկեղեցուն ամ-ից	Հ	9.7.4: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 1 հուշարձան (9.7.4.1)
	<b>9.7.5</b>	Գերեզմանոց	10-13 դդ.	վանքի բակում և շրջակայքում	Հ	9.7.5: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 29 հուշար- ձան (9.7.5.1- 9.7.5.29)
	<b>9.7.6</b>	Եկեղեցի Սբ. Գրիգոր	911 թ.	համալիրի հս կողմում	Հ	9.7.6
	<b>9.7.7</b>	Եկեղեցի - տապանատուն Սբ. Աստվածածին	1086 թ.	համալիրի բակի հվ մասում	Հ	9.7.7
	<b>9.7.8</b>	Շինություն	10-11 դդ.	կից է Սբ. Գրիգոր Եկե- ղեցու հս-աե անկյանը	Հ	9.7.8
	<b>9.7.9</b>	Շինություն	10-11 դդ.	սյունասրահից մոտ 2 մ հվ-ամ	Հ	9.7.9: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 1 հուշարձան (9.7.9.1)
	<b>9.7.10</b>	Սյունասրահ	10 դ.	կից է Սբ. Գրիգոր Եկեղեցուն և գավթին հվ-ից	Հ	9.7.10: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 12 հուշար- ձան (9.7.10.1- 9.7.10.12)

### 8.7 ՔԱՋԱՐԱՆ քաղաք

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՍՐՈՑ «ՆԱՊԱՏ»	Ք.ա. 2 հազ.	քաղաքից 4 կմ ամ	Հ	1
2			ԱՍՐՈՑ «ՇԼՈՐՈՒՏ»	միջնադար	Վերին Հանդ թաղամասից 1-1.5 կմ հս, Շլորուտ գյուղատեղիի մոտ, «Շիրմաք» հանդամասի մերձակայքում	Հ	2

3		ԱՐՁԱՆ «ՀԱՆՔԱԳՈՐԾ»		Հանքագործների մշակույթի պալատի մուտքի աջ կողմում	Հ	3
4		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՇԼՈՐՈՒՏ»	5-13 դդ.	Վերին Հանդ թաղամասից 1 կմ հս	Հ	4
	4.1	Գերեզմանոց	միջնադար	գյուղատեղիի աե եզրին	Հ	4.1
5		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՐԿԱԾՆԵՐԻՆ			Տ	5



Նկար 15.

Տեղամասերի հեռավորությունը մոտակա պատմության և մշակույթի հուշարձաններից

1. Արձան «Քաջարանի բանալին» 2,8կմ
2. Բաղաբերդի ամրոց, դիտակետ 1,7կմ

Կապանի «Նորոզին» ՍՊ ընկերությունը պարտավորվում է աշխատանքների ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի 438 որոշման 43-րդ կետի որոշման պահանջներով՝ մասնավորապես՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին»:

## 7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴԴՅՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

### ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մարմարացված կրաքարերի երևակման տարածքում Կապանի «Նորոզին» ՍՊԸ-ի կողմից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում աննշան տեխնադին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

#### Մթնոլորտային օդ.

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում կիրառվող տեխնիկան դառնալու են վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր, փոշեգոյացում տեղի է ունենալու նաև փորձնական հանույթի բացահանքերի սահմաններում:

Համաձայն շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերվող նախագծման նորմերի (СНИП 11-01-95, СНИП 1.02.01-85) սահմանային թույլատրելի խտությունները ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի, մրի և ծծմբային գազի համար համար համար համար սահմանափակումները կազմում են 0,0005գ/մ<sup>3</sup>; 0,000085գ/մ<sup>3</sup>; 0,00015գ/մ<sup>3</sup>; 0,0005գ/մ<sup>3</sup>:

Նախնական հաշվարկներին համաձայն, աշխատանքների ընթացքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

#### Ջրային ավազան.

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Ուսումնասիրվող տեղամասը Ողջի գետից գտնվում է մոտ 2կմ հեռավորության վրա և բացառվում է որևէ ազդեցություն գետի ջրերի վրա: 1-ին տեղամասի հարևանությամբ հոսող Գիրաթաղ գետակի ջրերը աղտոտումից զերծ պահելու նպատակով՝ 1-ին հորատանցքը հեռացվել է 10մետրով և ապահովվել է գետից ամենաքիչը 32մ հեռավորությունը:

Դաշտային աշխատանքների ընթացքում խմելու և տեղնիկական նպատակով օգտագործվելիք ջուրը կբերվի ընկերության՝ "Վեոլիա ջուր" ՓԲԸ -ի հետ պայմանագրի և ՇՄՆ-ի կողմից տրված ՋՕ թույլտվությունների հիման վրա /կցվում են, էջ 88-98/:

#### Հողային ծածկույթ

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման նպատակով հայցվող տարածքի 2-րդ տեղամասում, Իրան-Հայաստան 400ԿՎ գծի բարձրավոլտ էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման նպատակով բացվել է մոտ 3-4մ լայնությամբ 270մ երկարությամբ ճանապարհի և 11x11մ /121մ<sup>2</sup>/ մակերեսով հրապարակ՝ էլեկտրահաղորդման գծի հենասյան տեղադրման նպատակով:

Տարածքում նախկինում ընդերքօգտագործման նպատակով աշխատանքներ չեն իրականացվել և խախտված, վերականգնված տարածքներ չկան:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատահարթակների կառուցման և փորձնական հանույթի ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, լայնակույտերով, հորատման հարթակների և փորձնական բացահանքերի անմիջական հարևանությամբ, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով, հանված հողը հետ փռել: Հանված հողերի պահպանման հատուկ պայմաններ չեն նախատեսվում, քանի որ հորատանցքերի հորատումը և փորձնական հանույթը կտևի 1-2 ամսից ոչ ավել, որից հետո կիրականացվի խախտված տարածքների վերականգնում:

Խախտված հողատարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացման ծախսերը հաշվարկվել են՝ 420.1 հազ. դրամ: Ռեկուլտիվացման ման ծախսերի հաշվարկները տես սույն հաշվետվության 18-20 էջերում:

### **Բուսական և կենդանական աշխարհ.**

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա կլինի աննշան: Տեղամասերի տարածքում չկան անտառներ, չեն արձանագրվել բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ, հետևաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները չեն հանգեցնի տարածքի էկոհամակարգերի վրա նշանակալից բացասական ազդեցությունների դրսևորմանը:

#### **▪ Աղմուկ և թրթռումներ**

